



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

01.99

1-53



761



✓

Հրատարակութիւն Կենսորոնական գրականաւանդի.

491.99  
Ա-53

# ՆԱԽԱԿՐԹԱՆՔ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՌ ԼԵՁՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՅԱՑ

Ի ԳԱԲՐԻԷԼԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՅՎԱԶԵԱՆ

Handwritten mark



ՄԱՍՆ Ա.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՎԻՆ

ՃՈՒԱԳՈՅՆ ԲԱՆ ԶԱՌԱԶԻՆՍՆ

Handwritten: A 16973

Յ Փ Խ Ի Ս


Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՅԻԱՃԻԱՆՅ



ՌՅԻԷ—1878

УСЛОВА ШОБ Е  
1878.

Дозволено Цензурою. Тифлисъ 5 Февраля 1878 года.



~~5807~~

~~11346~~



32

## Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Հայերէն գրաբառ լեզուին ամենահարկաւոր ու ունն մի-  
ծամեծ դժուարութիւնք ունի տղայոց համար: Այս լճուարու-  
թեանց մէկ մասն անտի յառաջ կուգայ՝ որ տղայք իւրեանց  
խօսած աշխարհաբառ լեզուին քերականութիւնը չսովորած՝ ստի-  
պուած են գրաբառին քերականութիւնը սովորել աշխարհաբառն  
ուղիղ խօսելու և գրելու արուեստին դեռ չտեղեկացած,—որ  
բաւական դժուար արուեստ է,—կհարչըրուին գրաբառն ուղիղ  
հասկանալ և շարադրել. ուստի զարմանք չէ որ տարիներ կըը-  
չէ գրաբառ քերականութիւն սովորելը, և դարձեալ սակաւ են  
մեր ազգին մէջ քաջ հայկարան ասուելու արժանաւոր անձինք:

Կար ժամանակ մի՛ յորում գոնէ այս սուտ մխիթարու-  
թիւնս ունէին աշակերտք՝ իւրեանց վարժապետներէն լսելով թէ  
քերականութիւն գիտացողն ամէն բան կգիտենայ, այսինքն Պատ-  
մութիւն, Աշխարհագրութիւն, Բնագիտութիւն, Ֆիլիսոփայու-  
թիւն, Աստուածաբանութիւն և այլն: Այժմ թէ՛ վարժապետք և  
թէ՛ աշակերտք լաւ հասկացած են թէ քերականութիւնն դուռ  
կամ բանալի միայն կարելի է համարիլ այդ ամենայն գիտելեաց,  
և այն ըստ իմիք: Քանի որ այն գիտութիւններն գրոց լեզուով  
միայն կարելի էր կարդալ ու սովորիլ, ի հարկէ պէտք էր զը-  
րաբառին քերականութեան տեղեկանալ. իսկ երբ ամէն մարդ  
համողուեցաւ թէ շատ կարելի է ու պէտք ևս է կանոնաւոր աշ-  
խարհաբառ լեզուով ևս տեղեկանալ այն ամենայն գիտութեանց,

քերականութեան ուսումն սկսաւ չոր ու ցամաք և անմխիթար աշխատութիւն մի երկնալ, մանաւանդ զորոց վսեմ՝ գեղեցիկ լեզուին համը դեռ չզիտացող համբակաց:

Գրաբառն սովորելոյ դժուարութեանց պատճառներուն մին այս է անշուշտ՝ որ մեր մինչև ցայժմ ունեցած ամէն քերականութիւնք ընդհանրապէս նման են իրեբաց ըստ ոճոյ կամ մեթոտի թէպէտ և որն աւելի ընդարձակ է՝ որն համառօտ, որն աւելի մութ՝ որն աւելի պարզ, որք զրաբառ բացատրութեամբ՝ որն աշխարհարառ: Հնագոյններն թողուք. Չամչեան, Աւետիքեան, Սալահեան, Չալրխեան, Բագրատունի, և ուրիշ տասնէն աւելի նշանաւոր և աննշան անձինք որ հայերէն քերականութեան հեղինակ եղած են, կարծես թէ ամէնքն ևս խօսք զբրած են միմեանց հետ՝ որ չզանազանութիւն յիրեբաց դասախօսութեան ընդհանուր ոճոյն կողմանէ: Վասն զի սոցա ամենուն ևս ոճն կարելի է անուանել վերլուծական ոճ և ատեսակիան վարդապետութիւն, մինչդեռ տղայոց հասկացողութիւնն՝ ինչպէս յամենայնի մէջ՝ ևս առաւել յայսմ քերականական ուսման՝ կարօտ է ըստ մեզ շարադրական ոճոյ և գործնական կրթութեան:

Սովորական քերականութեանց ոճն և ջանքըն է՝ լեզուին կազմութեան պէսպէս յատկութեանց նախ պատճառն հասկացընել, յետոյ գործն, այսինքն լեզուի կազմութիւնն, մինչդեռ յայսնի է որ հարկաւոր է նախ լեզուն ընտանեցընել նոցա, յետոյ լեզուին զանազան յատկութիւններն, կանոններն հասկացընել՝ հանդերձ պատճառօք. այնպէս որ տղայք դեռ քերականութեան կանոններն չսովորած՝ լեզուն զըրեթէ հասկանան, և չափաւորապէս շարադրեն, յետոյ սովորին թէ իւրեանց հասկացած կամ շարադրածն ինչու համար ուղիղ է և ոչ ծուռ, կանոնաւոր է և ոչ անկանոն, հայկաբանութիւն է և ոչ օտարաբանութիւն:

Զայտոսիկ առաջի աչաց ունենալով և տեսնելով որ Ներոպայի զանազան ազգերն մօյժ ժամանակներս աւելի կաշխատին նոր նոր գործնական ոճերով զիւրացընել տղայոց քերականական ուսմունքն, ձեռք զարկինք ահա այս ‘Նախակրթանք հայերէն լեզուի, անունով գրքոյիւ շարագրել:

Ն ա խ ա կ ր թ ա ն ք գրինք այս մեր աշխատասիրութեան անունն՝ որ չկարծուի թէ կխոստանամք սովաւ կատարել ապէս սովորեցընել համբալից մեր նախնեաց հարուստ և հոյակապ լեզուն. այլ համարուի սա ի միոյ կողմանէ իրրև պատրաստութիւն լողալու. այն ծովածաւալ քերականութեան մէջ՝ յորում Հայրն Արսէն Բագրատունի միւս ամէն քերթողներէն աւելի ճարտար և ուղիղ կերպիւ ամփոփած է մեր գրարաւին գրեթէ բոլոր հարստութիւնքն: Միւս կողմանէ ջանացինք որ այս Նախակրթանքը միայն սովորող աշակերտք կարենան պարզ գրարաւ լեզուն ուղիղ հասկանալ և անսխալ շարագրել՝ հանդերձ գլխաւոր կանոնօք ուղղագրութեան:

Այս Նախակրթանաց առաջին մասն քանի մի տարուան մէջ չորս անգամ տպագրեցաւ, և այն՝ Ռուսաստանի պէս սակաւահայ կրկրի մէջ, ուստի և մեք սիրտ առինք ոչ միայն միւս մասերը շուտով պատրաստել ի տպագրութիւն, այլ առաջինն նորէն աչքէ անցնելով՝ զանազան մանր փոփոխութիւններ անել այս հինգերորդ տպագրութեանս մէջ, ինչպէս կրնան ասանել վարժապետք և աշակերտք:

Մէք այնպէս կարծեմք՝ թէ աղգային ութ կաս ինն տարեկան պատանեակը կարելի է ծրխական և ուրիշ սիլլբնական դպրոցաց մէջ ամբողջ տարի մի կարդալ սովորելոյ և գրավարժութեան պարտալիցընել, կրթելով նորա առողջանալութիւնը, և աշխարհաբաւ լեզուով հրրատարակուած ընթերցարանաց բառերն ու իմաստներն հասկացնելով և բացատրելով: — Նրկորոգ կամ երէորդ տա-

ըին անպատճառ այս Նախակրթանաց առաջին մասն պէտք է տալ տղուն ձեռքը, որ սկսի գրաբառէ աշխարհաբառ և աշխարհաբառէ գրաբառ թարգմանութիւն անելոյ վարժիլ, ուղղադրութեան կանոնները գործնական կերպիւ սովորիլ, և յառողանութեան արուեստին առաջ երթալ:--Այս գիրքն աւարտելէն յետոյ տալ տղուն ձեռքը երկրորդ մասը, յորում քերականութեան գլխաւոր կանոնները կսովորի առանց նախընթաց կրթութիւններէն ետ մնալոյ: Իսկ չորտարին պէտք է երրորդ մասը տրուի տղուն ձեռքը, յորում գրաբառին զարգարուն ու բարձր սճերուն ևս կտեղեկանայ: Եւ այսպէս աշակերտ մի որ չորս տարիամբողջ կենայ այնպիսի դպրոցաց միոյն մէջ, և այս Նախակրթանաց հրեք հատորն ևս աւարտէ, պէտք է որ ելած ժամանակն սովորած լինի ոչ միայն մաքուր աշխարհաբառ լեզուն, այլ և սլարդ գրաբառն առանց դժուարութեան հասկանայ և առանց քերականական սխալի շարադրէ:

Իսկ թէ ինչ կերպիւ դաս պիտի տայ վարժապետն աշակերտաց այս նախակրթանաց առաջին մասն, համառօտ ոճով հասկացընեմք այստեղ:

Ո՞՞ դասսխօսութեան, ըստ առաջնոյ մասին նախակրթանացս.

Ա. Դնեմք թէ վարժապետն տասը կամ տասերկու աշակերտ ունի՝ արդէն աշխարհաբառ ընթերցարանի կարդացմունքն աւարտած և բաւական դրաւարժ, նոցա ամենուն ձեռքն կուտայ Նախակրթանաց առաջին մասէն մի մի օրինակ, ինքն ևս կառնու մի օրինակ, և բարձր ձայնով, յստակ առողանութեամբ և ծանր ծանր կըկարդայ առաջին դասն, այսինքն գրաբառքն ա գիրը և նորա աշխարհաբառ թարգմանութիւնը:

Յետոյ աշակերտաց մէջէն աւելի գրավարժներէն սկսելով կարգալ կուտայ կարգաւ նոյն բնագիրն և թարգմանութիւնը մի մի անգամ, սրբագրելով նոցա արած սխալներն:

Այնուհետև կպատուիրէ որ ամէնք ևս բերնուց սերտեն նոցա, անգիր անեն այն բնագիրը, հասկացընելով նոցա թէ գրարաւուն սերտողութիւնն շատ կղիւրանայ եթէ նորա զիմացի աշխարհաբառ թարգմանութեանն ևս նային՝ յօղուած առ յօղուած:

Նրկրորդ օրն կպահանջէ վարժապետն որ իւրաքանչիւր աշակերտ բերնուց ասէ բնագրին խօսքերն՝ որքան կարելի է յտակ և ճիշտ առողանութեամբ:

Յետոյ այս կամ այն աշակերտին գրել կուտայ սև տախտակին վերայ բնագրին հատուածները, որ վարժին ուղղագրութեան և ուղիղ կէտադրութեան, և եթէ սխալին՝ կըսրբագրէ, միշտ բարձր ձայնով հասկացնելով պատճառներն ամենուն:

Բ. Նրկրորդ դասը պիտի լինի բնագրին մէջ գրաբառ խօսքերուն սերտողութիւնը:

Որովհետև այն խօսքերը շատ անգամ փոփոխուած ձևերով, այսինքն հոլովեալ կամ լծորդեալ ձևով են բնագրին մէջ, նայել եմք որ նոցա անփոփոխ կամ սկզբնական ձևն ևս գըտնուի անմիջապէս քովը: Արժապետին ձեռքն է՝ աշակերտաց ընդունակութեան նայելով իւր կողմանէ աւելացընել իւրաքանչիւր բառին վերայ նորանոր ածանցեալ բառեր և ի նոցանէ կազմուած ոճեր: Օրինակի համար, առաջին եօթնեկի բառարանին մէջ դրած եմք պ տ ու ղ բառը. վարժապետը կարող է սովորեցընել աշակերտաց թէ ինչ են նաև այս բառերս, անպատու, պտղաբեր, պտղատու, պտղակորոյս, պղտղակից, պտղաւէտ, և այլն: Գարձեալ՝ մեք դրած եմք առնէ բայը և նորա աներևոյթը՝ առնել.—վարժապետը կա-

բող է հասկացընել թէ ինչ տարբերութիւն կայ առնել բային և առնուել բային մէջ, ինչպէս միոյն հրամայականը կըլինի արա, միւսինը առ, միոյն կատարեալը արարի, միւսինը արի, և այլն: Այս բառարան անուանեալ դասի բառերն աւելի ճոխացուցել եմք հինգերորդ սպաղարութեանս մէջ:

Գ. Երրորդ դասը բառական թարգմանութիւն է բնագրին: խօսքերուն՝ գրեթէ միշտ առանց փոփոխութեան:

Վարժապետը առաջ նորէն ասել կուտայ աշակերտաց իւրեանց արդէն սերտած բնագիրը, կհարցանէ նորա մէջի բառերուն նշանակութիւնը, յետոյ կպատուիրէ որ սերտեն դասն այն կերպիւ՝ որ կարենան գրաբառին հարցուած ժամանակը աշխարհաբառն ասել, և երբ աշխարհաբառն հարցուի՝ գրաբառն պատասխանել:

Այս դասն ևս կարող է վարժապետն աւելի օգտակար և զուարճալի անել աշակերտաց՝ պէսպէս զիւրիմաց փոփոխութիւններ տալով խօսքերուն: Օրինակի համար, մեք զրած եմք ծառ բարի, վարժապետը կարող է աւելացընել՝ տապար բարի, հուր բարի, և այլն. մեք զրած եմք՝ ամենայն ծառ, նա կարող է աւելացնել՝ ամենայն պտուղ, ամենայն հուր, ամենայն տապար, ամենայն խարմն, և նոցա աշխարհաբառ թարգմանութիւնը պահանջել:

Գ. Չորրորդ դասը կրթութիւն է զրուցատրութեան կամ գրաբառ խօսակցութեան՝ հարցմամբ և պատասխանով: Այս հարցմունքներն, մանաւանդ պատասխանները, ըստ կարի բնագրին խօսքերովն շարադրուած լինելով, աշակերտք զժուարութիւն չեն քաշեր սովորելոյ, այնպէս որ վարժապետն կարող է նաև այս դասին վերայ գրսէն հարցմունքներ աւելացընել իւր կողմանէ, և պատասխաններն պահանջել աշակերտներէն՝ թէ բանիւ և թէ գրով: Օրինակի համար, առաջին եօթնեկի չոր-

բորդ դասը սովորեցընելէն յետոյ կարող է այս հարցմունքներս  
ևս գրել տալ աշակերտաց .

Ծառ բարի զինչ առնէ .

Ծառ չար զինչ առնէ .

Ձինչ արկանի ի հուր .

Ո՞ հատանէ զծառ, եւ այլն .

և պահանջել որ աշակերտք սոցա պատասխաններն իրենց կողմանէ  
չարադրեն և իւրաքանչիւր հարցման զիմացը գրեն :

Այս եղանակով իւրաքանչիւր շաբաթու մէջ եթէ չորս դաս  
առնուն աշակերտք, քսան շաբաթէն՝ կամ կէս տարուան մէջ՝  
մեծ յառաջագիմութիւն կունենան գրաբառ լեզուն հասկանա-  
լու կողմանէ, ինչպէս փորձով տեսնուեցաւ գրեթէ ամէն տեղ՝  
ուր որ այս ոճով կսովորին աշակերտք հայկաբանութեան սկզ-  
բունքը : Այնուհետև շատ զիւրին կլինի նոցա նաև ամէն շա-  
բաթ մի մի դաս առնուլ քերականական գիտելիքներէն, ինչպէս  
որ երկրորդ մասին սկիզբը պիտի բացատրեմք :

Թէ սորա և թէ միւս մասանց մէջ ջանացել եմք որ մեր  
աշխարհաբառն զիւրիմաց լինի ըստ կարի ամէն տեղի մերազ-  
նեայց . բայց որովհետև կարելի չէր ամենուն հաճոյացընել այս  
աշխարհաբառս, վարժապետաց կթողումք՝ իւրեանց աշակերտաց  
սովորական ոճին յարմարեցընել մի քանի յաճախեալ բառերն  
և այնպէս սովորեցընել նոցա . զոր օրինակ՝ Պօլսեցին եթէ ու-  
ղէ՝ կարող է կ լ ի ն ի, կ լ ի ն ի ն, ս ո Ր ա, ն ո Ր ա, բառերուն  
տեղն ասել՝ կ ը լ լ ա յ, կ ը լ լ ա ն, ա ս ո Ր ա ն ո Ր, կարող է՝  
ա ս ե լ, ա ն ե լ, ա ս ա ց, ա Ր ա լ, բառերուն տեղը սովորեցը-  
նել՝ ը ս ե լ, ը ն ե լ, ը ս ա լ, ը Ր ա լ : Նմանապէս Հայաստան-  
ցին կարող է գործածել՝ եթէ ուղէ՝ ա յ ս, ա յ դ, ա յ ն, ա լ, և  
սոցա նման բառերուն տեղը՝ է ս, է դ, է ն, է լ, է լ ի և այլն :

Մեր դիտաւորութիւնն է այս Նախակրթանաց մէջ գլխաւորապէս գրաբանութիւնն ուսումը զիւրացընել մեր ազգին մանկանց, քան թէ աշխարհաբանին այս կամ այն տեսակն սովորեցընել նոցա անպատճառ, թէպէտ և տարակոյս չունիմք որ աշակերտք այս ոճով գրեթէ առանց իմանալու կը վարժին մաքուր աշխարհաբանն հասկանալ, խօսիլ և առանց սխալի շարադրել:

ՆԱԽԱԿՐԹԱՆՔ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՌ ԼԵԶՈՒԻ

Ե Օ Թ Ն Ե Ա Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ

1. Ծառ բարի պտուղ բարի առնէ, և ծառ չար պտուղ չար առնէ:

2. Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել:

3. Ի պտղոյ անտի ծառն ճանաչի:

4. Աւասիկ տապար առ արմին ծառոց դնի:

5. Ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Բարի ծառը բարի պտուղ կբերէ, և չար ծառը չար պտուղ կբերէ:

2. Կարող չէ բարի ծառը չար պտուղ բերել, և ոչ չար ծառը կարող է բարի պտուղ բերել:

3. Ծառը պտղէն կճանաչուի:

4. Ահա կացինը ծառերու արմատին մտա կգրուի:

5. Ո՛ր ծառն որ բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Շառ բարի, բարի ծառ, լաւ  
ծառ:  
Պտուղ, բերք, միրգ:  
— Պտղաբեր, պտուղ բերող:  
— Պտղատու. պտուղ տուող:  
Բարի. բարի, լաւ:  
— Բարեաւ. բարով:  
— Բարերար. բարիք անող:  
Առնէ. կանէ, կըտայ, կբերէ.—  
— Առնել. անել:  
— Արարի. արի:  
— Արա. արա:  
— Առնուլ. անել:  
Ո՛չ կարէ. կարող չէ:  
— Կարէ. կարող է:  
— Կարացի. կարողացայ:  
Ի պտղոյ. պտղէն, բերքէն:  
— Պտղով իւրով. իւր պտղովը:  
— Ի պտղոց երկրի. զետնի բեր-  
բերէն:  
Անտի. այն բանէն, այն տեղէն:  
— Ի ծառոյ անտի. այն ծառէն:  
— Ի զեղջէ անտի. այն զիւղէն:  
— Աստի. այս տեղէն:  
— Այտի. այդ տեղէն:  
Ճանաչի. կճանաչուի:

— Ծանեայ. ծանաչեցայ:  
— Ծանիր զքեզ. ճանանչիր քեզ:  
Աւասիկ. ահա, ահա այստեղ:  
— Աւազիկ. ահա այդտեղ:  
— Աւանիկ. ահա այնտեղ:  
— Աւասիկ եմ. ահա այստեղ եմ:  
Առ արմին. արմատին մօտ:  
— Արմն. արմատ:  
— Առ նմին. նորա մօտ:  
Գնի. կորուի, զրուած է:  
— Եղի. զրի:  
— Եղեալ. զրուած:  
Ամենայն. ասէն:  
— Ամենայն որ. ամէն մարդ:  
— Ամենայն ինչ. ամէն բան:  
— Յամենայնի. ամէն բանի մէջ:  
Հատանի. կկըտորուի:  
— Հատանել. կտրել:  
— Հատ զնա. կտրէ այն:  
Ի հուր. կրակը, կրակին մէջ:  
— Հուր. կրակ:  
— Ի հրոյ. կրակէն:  
— Հրով. կրակով:  
— Հրեղէն. կրակէ:  
Արկանի. կձգուի:  
— Արկանել. ձգել:

—Արկ զրեզ աստի ի վայր.

Ոստեղէն վայր ճղէ բեզ:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Մառ բարի.

Պտուղ բարի առնէ.

Մառ չար.

Պտուղ չար առնէ.

Ոչ կարէ.

Մառ բարի.

Պտուղ չար առնել.

Բարի ծառ. լաւ ծառ:

Բարի պտուղ կբերէ

Գէշ ծառ, վատ ծառ.

Վատ պտուղ կբերէ:

Չկրնար, կարող չէ

Բարի ծառը, լաւ ծառ մի:

Վատ պտուղ բերել:

ԵՕԹՆԵԱԿ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ

1. Դուք էք աղ երկրի.  
ապա թէ աղն անհամի, ի՞նչ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Դուք աշխարհի աղն  
էք. իսկ թէ որ աղը իւր

յաղեցի.— Ոչ իմիք ազդիցէ  
այնուհետեւ, բայց եթէ ըն-  
կենուլ արտաքս և կոխան  
լինիլ ի մարդկանէ:

2. Գուք էք լոյս աշխար-  
հի: Ոչ կարէ քաղաք թաք-  
չել որ ի վերայ լերին կայցէ:

3. Եւ ոչ լուցանեն ճրագ  
և զնեն ընդ գրուանաւ,  
այլ ի վերայ աշտանակի, և  
լոյս տայ ամենեցուն որ ի  
տանն իցին:

4. Այնպէս լուսաւորես-  
ցէ լոյս ձեր առաջի մարդ-  
կան՝ որպէս զի տեսցեն  
զգործս ձեր բարիս, և փա-  
ռաւորեսցեն զճայր ձեր որ  
յերկինս է:

Համը կորցնէ, ինչով պիտի  
աղուի:— Այնուհետեւ ա-  
մենեկին բանի չիգար. հա-  
պա դուրս կը ձգուի ու  
ոտանակոխ կը լինի մարդիկ-  
ներէ:

2. Գուք աշխարհի լոյսն  
էք: Լեռան վերայ կեցած  
քաղաքն կարող է թագ  
կենալ:

3. Ճրագն ևս չեն վառեր  
ու ամանի տակ դներ, այլ  
մամակալի վերայ (կը դը-  
նեն), որ լոյս տայ ամէն  
տանը մէջ եղողներուն:

4. Այնպէս լուսաւոր լի-  
նի ձեր լոյսը մարդկանց առ-  
ջը, որ ձեր բարի գործերը  
տեսնեն ու փառք տան ձեր  
հօրը, որ երկնումն է:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Աղ երկրի, աշխարհիս աղը:—

—Աղիւ. աղով:

—Աղած կամ աղածոյ. աղի մէջ  
դրած:

Անհամիլ, անհամանալ, համը կոր-  
ցնել:—

Ի՞նչ. ինչով, ինչէն:

—Ի՞նչ գիտացեր, ինչէն գիտացիր:

Յաղել. աղել, աղանել,  
Ոչ խիբ. ոչ մէկ բանի:  
—Ոչ խիբ. ոչ մէկ բանով:  
Ազդել. ոյժ ունենալ, բանի գալ:  
—Ազդու. զորաւոր, ուժեղ, սաս-  
տիկ:  
Այնուհետև. նորանից յետոյ, ան-  
կից յետոյ:  
—Այուհետև. սորանից յետոյ,  
ասկից յետոյ:  
Ընկենուլ. ձգել, ձգուիլ:  
—Ընկից դարձաթն. փողը ձգեց:  
Արտաքս. դուրս, դէպի դուրս:  
—Եւ արտաքս. դուրս ելաւ:  
—Արտաքոյ. դուրսը:  
—Եկաց արտաքոյ դրանն. դըռ-  
նէն դուրս կանգնեցաւ:  
Կոխան լինիլ. կոխուիլ, ոտքի  
տակ ընկնիլ:  
Ի մարդկանէ. մարդիկներէն:  
Թաքչիլ. ծածկվիլ, պահուիլ:  
—Թաքեաւ ի նոցանէ. պահուե-  
ցաւ նոցանէ:  
Ի վերայ լերին. լեռան վերայ:  
—Լեռոն՝ լեռ, սար:  
—Լերինք. լեռներ, սարեր:  
—Իլերանց. լեռներէն, սարերէն:  
Կայցէ. կեցած լինի, կենայ:  
—Կալ. կենալ:

—Կաց. կեցիր, կանգնիր:  
—Կեաց. ապրէ, ապրիս:  
Լուցանել. վառել:  
—Լուցին զլսպտերս իւրեանց.  
Իւրեանց լսպտերները վառեցին:  
Ճրագալոյց. ճրագներ վառելու օր,  
մոմեր վառելը:  
Գրուան . աման, չափ:  
—Ընդ գրուանաւ. ամանի տակ:  
Աշտանակ. մոմակալ:  
—Ի ծի աշտանակել. ծի հեճնել  
շիտակ:  
—Ի տունս տունս. զանազան  
տներ:  
—Տանէ ի տուն. տնէ տուն:  
Լուսաւորել. լոյս տալ:  
Առաջի մարդկան. մարդկանց ա-  
ռաջը.  
—Առաջին. առաջինը:  
Տեսանել. տեսնել:  
—Տեսին զնա. տեսան նորան:  
Չգործս ձեր բարիս. ձեր բարի  
գործերը.  
Փառաւորել. փառք տալ:  
—Փառաւորել տէր. ամինայն  
փառքի տէր:  
Հայր ձեր որ յերկինս. ձեր հայրը  
որ երկինքն է:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Դուք էք աղ երկրի,  
 Ապա թէ աղն անհամի,  
 Ի՞նչ յաղիցի.  
 Ոչ իմիք ազդիցէ այնուհետև.

Բայց եթէ ընկնուլ արտաքս:  
 Կոխան լինել ի մարդկանէ.  
 Դուք էք լոյս աշխարհի:  
 Ոչ կարէ թաքչիլ.  
 Քաղաք որ ի վերայ լերին  
 կայցէ.

Ոչ լույսնեն ճրագ.  
 Ոչ դնեն ընդ գրուանաւ.  
 Այլ ի վերայ աշտանակի.  
 Լոյս տայ ամենեցուն.  
 Որ ի տանն իցեն,  
 Այնպէս լուսաւորեսցէ լոյս  
 ձեր.

Առաջի մարդկան.  
 Որպէս զի տեսցեն զգործս ձեր  
 բարիս:  
 Փառաւորեսցեն զճայր ձեր.  
 Որ յերկինս է.

Դուք աշխարհի աղն էք:  
 Իսկ եթէ աղը անհամանայ:  
 Ինչո՞վ պիտի աղուի:  
 Ամենեին բանի չիզար այնու-  
 հետև:

Բայց եթէ դուրս ձգուիլ:  
 Մարդկան ոտքի տակը երթալ:  
 Դուք աշխարհի լոյսն էք:  
 Կարող չէ ծածկուիլ:  
 Լեռան վերայ կեցած քաղա-  
 քը:

Ճրագ չեն վառեր:  
 Չեն դներ ամանի տակ:  
 Հապա մոմակալի վերայ:  
 Լոյս կուտայ ամենուն:  
 Որ տանը մէջ են:  
 Այնպէս թող փայլի ձեր լոյսը:

Մարդկանց առաջը:  
 Որ տեսնեն ձեր բարի գոր-  
 ծերը:  
 Փառք տան ձեր հօրը:  
 Որ երկնքունն է:

ԳԱՍ Գ. ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԻՒՆ.

Չինչ էք դուք.  
 Չինչ լինի աղն.

Ալ երկրի.— Լոյս աշխարհի:  
 Անհամի:

Անհամեալ աղն զինչ լինի.  
 Ո՞ւր ընկենու աղն անհամեալ.  
 Ձինչ լինի այնուհետև.  
 Ո՞ր քաղաք ոչ կարէ թաքչել.  
 Ձինչ լույսանեն ի տան.  
 Ո՞ւր դնի ճրագն.

Ձինչ առնէ ճրագն որ ի վերայ  
 աշտանակի կայցէ.

Ո՞յր առաջի պարտի լուսա-  
 ւորել լոյս մեր:

Ո՞րպէս պարտի լուսաւորել.

Ձո՞ պարտին փառաւորել մար-  
 դիկ.

Ո՞ւր է հայրն մեր.

Ոչ իմիք ազդէ:

Արտաքս:

Կոխան լինի ի մարդկանէ:

Որ ի վերայ լերին կայցէ:

Ձճրագ:

Ոչ ընդ գրուանաւ, այլ ի վե-  
 րայ աշտանակի:

Լոյս տայ ամենեցուն որ ի  
 տանն իցեն:

Առաջի մարդկան:

Որպէս զի տեսցին մարդիկ  
 զգործս մեր բարիս:

Ձհայր մեր:

Յերկինս է:

ԵՐԹՆԵԼԿ ԵՐՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

Ի ՆԱԳԻԹ

ԹԱՐԴԵԱՆՈՒԹԻՒՆ

1. Յորժամ առնիցես ու  
 զորմութիւն, մի՛ հարկաներ  
 փող առջի քո, որպէս կեղ-  
 ծաւորքն առնեն ի ժողո-  
 վուրդս և ի հրապարակս,

1. Ոգորմութիւն տուած  
 ժամանակից առաջէդ փող  
 զարնել մի՛ տար, ինչպէս որ  
 կեղծաւորները կանեն ժո-  
 ղովարաններու և հրապա-


2.

580

##

41346

16923



որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ:

2. Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա:

3. Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի զիտասցէ ձախ քո, զինչ գործէ աջ քո:

4. Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ, և հայրն քո՝ որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս:

րակներու մէջ, որ մարդկանցմէ փառաւորուին:

2. Իրաւ կասեմ ձեզ որ նոցա վարձն իսկ այն է:

3. Իսկ դու երբ ողորմութիւն տաս, այն կերպով տուր որ աջ ձեռքիդ ինչ արածը ձախ ձեռքդ չիմանայ:

4. Այնպէս որ ողորմութիւնդ ծածուկ լինի, և քո հայրդ որ ծածուկ կրտեսանէ՝ նորա հատուցումը յայտնապէս կանէ քեզ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ.

Յորժամ երբ, երբոր:

— Յայնժամ. այն ժամանակ

— Յորժամ եկն Յիսուս. երբոր եկաւ Յիսուս:

Հարկանել, խփել, փչել:

— Ենար. խփեց, փչեց:

Յորժամ հարկանի փող. երբոր փողը փչուի:

Մի հարկաներ փող. փող մի զարներ, փող մի փչեր:

— Ի ծայն փողոյ. փողի ծայնով:

Որպէս. ինչպէս, ինչպէս որ:

— Որպէս. ինչպէս, ինչ կերպով:

— Որպէս մտեր այսր. ինչպէս մտար այս տեղ:

Կեղծաւոր. խաբեբայ, երկու երեսանի:

— Կեղծաւորիլ. կեղծաւորութիւն անել:

— Կեղծ. սուտ, խաբէական, շինծու:

Ի ժողովուրդս. ժողովարաններու մէջ:

Հրապարակ. բաց տեղ, մէջ տուն:

— Հրապարակել. դուրս հանել:

— Հրապարակաւ. բաց կերպով,  
յայտնապէս:

Մի որ զիտասցէ. ոչ որ չզիտենայ:

Դուք զիտասջիք. դուք զիտացէք:

Ի ծախ մէ, ընդ ծախմէ. ծախ  
կողմը:

— Զախակողման. ծախ կողմինը:

Ընդ աջմէ. աջ կողմը:

— Յաջ եւ յահեակ. դէպի աջ ու ծախ

Ի ծածուկ. գաղտուկ:

Հատուցանել. վճարել:

— Հատոյ. վճարէ

— Հատոյ զոր պարտխատ. պարտք  
վճարէ:

Յայտնապէս. յայտնի կերպով:

— Յայտնաբարբառ. յստակ ծայ-  
նով, յայտնի խօսքով:

— Յայտարար. յայտնող, ինաց  
տուող:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Յորժամ առնիցես ողորմու-  
թիւն.

Մի հարկաներ փող.

Առաջի քո.

Որպէս կեղծաւորքն առնեն.

Ի ժողովուրդս և ի հրապա-  
րակս.

Որպէս զի փառաւորեացին ի  
մարդկանէ.

Ամէն ասեմ ձեզ.

Այն իսկ են վարձք նոցա.

Այլ դու յորժամ ողորմութիւն  
առնիցես

Մի զիտասցէ ձախ քո.

Զինչ գործէ աջ քո.

Երբ որ ողորմութիւն անես:

Փող մի զարկեր:

Քու առաջդ:

Ինչպէս որ կեղծաւորները կա-  
նեն:

Ժողովուրդներու և հրապա-  
րակներու մէջ:

Որպէս զի փառաւորուն մար-  
դիկներէ:

Ըշմարտար կասեմ ձեզ:

Նոցա վարձքն այն իսկ է:

Իսկ դուն երբ ողորմութիւն  
անես

Չիմանայ ձախ ձեռքդ.

Ինչ որ կանէ աջ ձեռքդ:

Որպէս զի եղիցի ողորմութիւն  
քո ի ծածուկ.

Հայրն քո որ տեսանէ ի ծա-  
ծուկ.

Հատուցէ քեզ յայտնապէս.

Որպէս զի ողորմութիւնդ ծա-  
ծուկ լինի:

Քո հայրդ որ կըտեսնէ ծա-  
ծուկ:

Կըզճարէ քեզ յայտնի կերպով:

ԴԱՍ Գ. ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԻՒՆ.

Ե՞րբ չիցէ ինձ պարտ փող  
հարկանել առաջի իմ.

Ձինչ ոչ պարտիմ հարկանել:

Ո՞րք իցեն որք փող հարկա-  
նեն առաջի իւրեանց.

Ո՞ւր հարկանեն զփողն.

Ընդէր փող հարկանիցեն.

Ուստի կամին փառաւորիլ.

Ձինչ իցեն վարձք այնպի-  
սեացն.

Ո՞րպէս պարտ իցէ լինիլ ո-  
ղորմութեանն:

Ո՞րչափ ի ծածուկ պարտ իցէ  
առնել զողորմութիւն.

Ո՞վ հատուցէ ինձ ընդ ողոր-  
մութեանն զոր առնեմ.

Ո՞րպէս հատուցէ հայրն իմ  
երկնաւոր.

Յորժամ ողորմութիւն առնի-  
ցես:

Փող:

Կեղծաւորն:

Ի ժողովուրդս և ի հրապա-  
րակս:

Որպէս զի փառաւորեսցին ի  
մարդկանէ:

Ի մարդկանէ:

Այն իսկ են վարձք 'նոցա' զի  
փառաւորին ի մարդկանէ:

Ի ծածուկ:

Այնպէս զի ոչ գիտասցէ ձախ  
քո զինչ գործէ աջ քո:

Հայրն քո որ տեսանէ ի ծա-  
ծուկ:

Յայտնապէս:

## ԵՕԹՆԵԱԿ ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

### ԲՆԱԳԻՐ

1. Հայր մեր որ յերկինս,  
սուրբ եղևցի անուն քո.  
Եկեցէ արքայութիւն քո.  
Եղևցին կամք քո որպէս յերկինս  
և յերկրի:

2. Զհաց մեր հանապա-  
գորդ տուր մեզ այսօր, և  
թող մեզ զպարտիս մեր,  
որպէս և մեք թողումք  
մերոց պարտապանաց:

3. Եւ մի ասնիր զմեզ  
ի փորձութիւն, այլ փրկեա  
զմեզ ի չարէ:

4. Զի քո է արքայու-  
թիւն և զօրութիւն և  
փառք յաւիտեանս. ամէն:

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Ո՛վ հայր մեր՝ որ  
երկինքն ես, օրհնեալ լի-  
նի քո անունդ. քո կամքդ  
կատարուի երկրիս վերայ՝  
ինչպէս որ կը կատարուի  
յերկինքը:

2. Մեր ամէն օրուան հա-  
ցը տուր մեզ այսօր, և  
թող մեզ մեր պարտերը,  
ինչպէս որ մեք ևս մեզ  
պարտք ունեցողներուն կը  
թողումք:

3. Փորձանքի մէջ մի՛  
ձգեր մեզ, այլ ամէն չար  
բանէ փրկէ մեզ:

4. Ղևան զի թագաւո-  
րութիւն, ոյժ, փառք, և  
ամէն ևս քո են յաւի-  
տեան. ամէն:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Երկին. երկինք,  
— Յերկնէ. երկնքէն:  
— Յերկնից. յերկնքէն:  
— Ընդ երկինս և ընդ երկիր.  
երկնքին ու երկրիս մէջտեղը:  
Սրբասուն. սրբութեամբ մեծա-  
ցած:  
— Սրբասէր. մարտնչիւն սիրող:  
Անուամբ հօր. հօր անունովը:  
— Յականէ. յանուանէ. իւրաքան-  
չիւրին անունովը:  
— Չինչ անուն է քո. անունդ  
ինչ է:  
Եկեսցեն. թող դան, պիտի դան:  
— Եկն իտուն. տուն եկաւ:  
Արքայ. Թագաւոր:  
— Յարքայից հօրաց. զօրաւոր  
Ցագաւորներէ:  
— Արքունի. թագաւորական:  
Կամայ եւ աւհասայ. կամօք եւ  
չկամենալով:  
— Կամք եղիւ ինձ. կամեցայ:  
Հացիւ. հացով:  
— Ի հացէ անտի. այն հացէն:  
Հանապազորդ. մշտական, ամէն  
օրուան:

— Հանապազ. միշտ, ամէն ժամա-  
նակ:  
Ետո՛ր մեզ. տուիր մեզի:  
Մինչեւ ցայսօր. մինչեւ այս օրս:  
Թողից նմա. թողում նորան, կը-  
նէրեմ իրեն:  
Պարտապան. պատք ունեցող:  
— Պարպիմ. պարտական եմ:  
— Պարտէ ենձ երթալ. պէտք է  
որ երթամ:  
Մի տանիր. մի ձգեր:  
— Տարայց. կտանիմ, պիտի տա-  
նիմ:  
Փորձուծիւն. փորձանք, վտանգ:  
— Փորձանաւոր. փորձ եղած:  
Փրկիչ. փրկող, ազատող:  
— Փրկարար. փրկուծիւն տուող:  
Ջշարսն չարաւ կորուսցէ. չարերը  
չարաչար կկորցնէ:  
Զօրուծիւն. ոյժ:  
— Զօրեղ. զօրաւոր, ուժեղ:  
— Զօրել. ոյժը հասնել, դիմանալ:  
Յաւիտեանս յաւիտելից. անվախ-  
ճան ժամանակով:  
Ամէն. եղիցի, այնպէս թող լի-  
նի:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Հայր մեր.  
 Որ յերկինս.  
 Սուրբ եղիցի.  
 Անուն քո.  
 Եկեսցէ արքայութիւն քո.

Եղիցին կամք քո.  
 Որպէս յերկինս.  
 Եւ յերկրի.  
 Ձհաց մեր հանապազորդ.  
 Տուր մեզ այսօր.

Եւ թող մեզ.  
 Չպարտիս մեր.  
 Որպէս և մէք թողումք  
 Մերոց պարտապանաց.  
 Մի՛ տանիր զմեզ ի փորձու-  
 թիւն.

Այլ փրկեա զմեզ ի չարէ.  
 Ձի՛ քո է արքայութիւն և զօ-  
 րութիւն և փառք յաւի-  
 տեանս. ամէն.

Մեր հայր:  
 Որ երկնքումն ես:  
 Սուրբ լինի:  
 Քո անունդ:  
 Թող գայ քո թագաւորու-  
 թիւնդ:

Թող լինի քո կամքդ:  
 Ինչպէս երկնքում:  
 Երկրիս վերան ես:  
 Մեր ամէն օրուան հացը:  
 Տուր մեզ այսօր:

Ու թող մեզ:  
 Մեր պարտքերը:  
 Ինչպէս մէք ես կ'թողումք:  
 Մեզ պարտք ունեցողներուն:  
 Մի՛ ձգեր մեզ փորձութեան  
 մէջ:

Այլ ազատէ մեզ չարէն:  
 Վասն զի թագաւորութիւնը,  
 ոյժը, փառքը քո են յաւի-  
 տեանս, ամէն:

ԴԱՍ Դ. ՉՐՈՒՅԱՏՐՈՒԹԻՒՆ.

Ո՛ւր է հայրն մեր.  
 Ձի՛ արդ կոչեմք մէք զԱստուած.  
 Ձի՛նչ խնդրեմք ի նմանէ.

Յերկինս է:  
 Հայր մեր:  
 Ձի՛ սուրբ եղիցի անուն նորա:

Վասն արքայութեան նորա  
զինչ ասեմք.

Ո՞ր կամք պարտին լինել յեր-  
կրի.

Ո՞րպէս.

Զո՞րնիւթական հայցուած առ-  
նեմք յԱստուծոյ.

Զո՞ր հաց.

Ե՞րբ կամ վասն ո՞րքան ժա-  
մանակի հայցեմք զհացն.

Զինչ խնդրեմք յԱստուծոյ թո-  
ղուլ մեզ.

Ո՞րպէս խնդրեմք թողուլ.

Յինչ խնդրեմք չտանել զմեզ.

Եւ ուստի փրկել.

Զայս ամենայն որպիսի յուսով  
և հաւատով հայցեմք.

Զի եկեսցէ ի վերայ մեր:

Հօրն մերոյ որ յերկինս է:

Որպէս լինի յերկինս:

Հայցեմք զհաց մեր:

Զհանապազորդ:

Տուր մեզ, ասեմք, այսօր:

Զպարտիս մեր:

Որպէս և մեր թողումք մե-  
րոց պարտապանաց:

Ի փորձութիւն:

Ի չարէ:

Զի հաւատամք թէ նորա է  
արքայութիւն և զօրութիւն  
և փառք յաւիտեանս:

## ԵՕԹՆԵԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ

1. Զի՞ տեսանես զշիւղ  
յական եղբօր քո, և ի  
քում ականդ զղերանդ ոչ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Ինչո՞ւ համար եղբօրդ  
աչքին մէջ շիւղը կտեսնես,  
և քո աչքիդ մէջ եղած

նշմարես. կամ զիտորդ ա-  
սես ցեղբայր քո, թող հա-  
նից զշիւղղ յականէ քում-  
մէ. և ահաւաղիկ ի քում  
ականդ գերան կայ:

2. Մի տայք զսրբութիւն  
շանց, և մի արկանէք զմար-  
գարիտս ձեր առաջի խո-  
զաց, զի մի առ ոսն կո-  
խեսցեն գնոսա, և դարձեալ  
երգիծուցանիցեն զձեզ:

3. Մտէք ընդ նեղ դու-  
ռն. քանզի ընդարձակ է  
դուռնն և համարձակ ճա-  
նապարհն որ տանի ի կո-  
րուսո, և բազումք են որ  
մտանեն ընդ նա:

4. Քանի անձուկ է դուռն  
և նեղ ճանապարհն որ  
տանի ի կեանս, և սա-  
կաւք են որ գտանեն զնա:

գերանին չես նայիր. կամ  
թէ ի՞նչպէս կասես եղբորդ  
թէ թող աչքիդ շիւղղ  
հանեմ, մինչդեռ քու աչ-  
քիդ մէջ գերան կայ:

2. Սուրբ բանը շներուն  
մի տաք, և ձեր մարգա-  
րիտները խոզերուն առաջ  
մի ձգէք, որպէս զի ոտքի  
տակ չկոխեն և չըգառ-  
նան չպատառեն ձեզ:

3. Նեղ դռնէն մտէք,  
վասն զի դէպ ի կորուստ  
տանող դուռը լայն և ար-  
ձակ, և ճանապարհը բաց  
է, և նորա միջով մտնողները  
շատ են:

4. Ո՛րքան նեղ է դէպ ի  
կեանք տանող դուռն ու  
ճանապարհը, և այն գտա-  
նողները սակաւ են:

### ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Ձի. ինչ, ինչո՞ւ:

— Ձիէ զի. ինչո՞ւ համար:

Ձի բարի, ինչպէս բարի, որքան  
զովելի:

— Զի. վասն զի, որպէս զի.

Շիւղ. ծիղ, փշիկ:

Ակն. աչք:

— Միով ակամբ. մէկ աչքով:

— Ակն աղբեր. ջրի ակը, աղբիւրի սկիզբը:

— Ակն պատուական, ազնիւ քար, գոհար:

Եղբարց իմոց. իս եղբարներուս:

— Ընդ գերանօք. գերաններու տակ:

Նշմարել. դիտել, տեսնել:

Զիւրդ. ինչպէս:

Յեղաբայր քո. քու եղբորդ:

— Յիայր կամ ցիայր. հօրը կամ մօրը:

— Յնոսա. նոցա:

— Ասա դու ցիս. ասա դուն ինձ:

Թող հանից. թող հանեմ:

— Եհոն զիս. հանեց ինձ:

— Յականէ քումմէ. քու աչքէդ:

— Ի քումականդ. քո աչքիդ մէջ:

Ապա. յետոյ:

— Ապս ուրեմն. ուրեմն եթէ այնպէս է:

Հայեաջիր կնայիս, պէտք է նայիս:

Սրբութիւն. սուրբ բան:

Շանց. շներու:

Մի արկաներ. մի ձղեր, մի նետեր:

Առաջի խողաց. խողերու առաջը:

— խողարած. խող արածեցնող:

Առ ոտն կոխել. ոտքի տակ կոխել, ոտնակոխ անել:

Դարծեալ. ետ դառնալով:

— Դարծեալ. նորէն, վերստին:

Երզիծուցանել. պատառտել, զիշատել:

Քանզի. որոհետեւ, այն պատճառով որ:

Ընդարձակ. լայն ու արձակ:

Ճանապարհ. ճամբայ:

Ի կորուստ. դէպի կորուստ:

— կորստական. կորսուելու, յանցաւոր.

Բազումք. շատ մարդիկ:

— Բազում անգամ. շատ անգամ:

— Բազմաթիւ. խիստ շատ:

Քանի. որքան, ինչքան:

Անձուկ. նեղ:

Սակաւք. սակաւ մարդիկ.

Յետ սակաւուց. փոքր ժամանակէ յետոյ:

— Սակաւպետ. փոքր բանով, գոհ եղող:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹ՚ԻՒՆ ԹԱՐՄԱՆՈՒԹԵԱՆ

Ձի տեսնես զչիւղ.  
Յական եղբոր քո.  
Ի քում ահանդ.  
Ձգերանդ ոչ նշմարես.  
Կամ զիւրդ ասես ցեղբայր քո.

Թող հանից զչիւղդ.  
Յականէ քումմէ.  
Ահաւաղիկ իբում ահանդ գե-  
րան կայ:  
Մի տաչք զսրբութիւն շանց.  
Մի արկանէք զմարգարիտս  
ձեր առաջի խողաց:  
Ձի մի առ ոտն կոխեսցեն  
զնոսա.

Եւ դարձեալ երգիծուցանիցեն  
զձեզ:

Մտէք ընդ նեղ դուռն.  
Քանդի ընդարձակ է դուռնն

Եւ համարձակ (է) ճանապար-  
հըն:

Որ տանի ի կորուստ-  
Քաղու՞ք են որ մտանեն ընդ  
նա.

Քանի անձուկ է դուռնն.

Եւ նեղ (է) ճանապարհն.

Որ տանի ի կեանս.

Ինչո՞ւ կտեսնես շիւղը:  
Քո եղբորդ աչքին մէջ:  
Քո աչքիդ մէջ:  
Այդ դերանը չես տեսնում:  
Կամ թէ ինչպէս ես ասում  
եղբորդ:

Թող հանեմ այդ շիւղը:  
Քո աչքէդ:  
Ահա քո աչքիդ մէջ գերան  
կայ:

Սուրբ բանը մի տաք շներուն:  
Մի ձգէք ձեր մարգարիտները  
խողբու առաջն:

Որպէս զի ոտի տակ չկոխեն  
նորանց:

Եւ չղառնան պատառնն ձեզ:

Մտէք նեղ դռնէն:  
Որովհետև լայն և արձակ է  
այն դուռը:

Եւ բաց է այն ճամբան:

Որ կը տանի դէպ ի կորուստ:  
Շատերն են որ կը մտնեն  
այն դռնէն:

Որքան նեղ է այն դուռը:  
Եւ նեղ է այն ճանապարհը:  
Որ կը տանի դէպ ի կեանքը:

Սակաւք են որ գտանեն զնա.

Սակաւներն են, որ կը զանեն  
նորան:

ԳԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Զինչ տեսանես յական եղբօր  
քո.

Զինչ կայ ի քում ականդ:  
Ընդէր կամիս հանել զչիւղն  
յականէ եղբօր քո:

Ո՞ւմ չիցէ պարտ տալ զսր-  
բուծիւն:

Զինչ չիցէ պարտ արկանել ա-  
ռաջի խողաց.

Ընդէր չիցէ պարտ արկանել  
առաջի խողաց զմարդարիտս  
մեր.

Զինչ կարեն առնել ընդ մեզ  
խողք.

Ուտի՞ պարտ իցէ մեզ մտա-  
նել:

Ո՞ր դուռն տանի ի կորուստ.

Եւ որ տանիցի ի կեանս.

Ո՞ք իցեն որ մտանեն ընդ  
ընդարձակ դուռն.

Ո՞ք իցեն որ գտանեն զան-  
ձուկ դուռնն.

Զչիւղ:

Գերան:

Առ կեղծաւորութեան:

Շանց:

Զմարդարիտս մեմ:

Զի մի՞ առ ոտն կոխեսցեն  
զնոսա:

Կարեն դառնալ և երգիծու-  
ցանել զմեզ:

Ընդ նեղ դուռն:

Ընդարձակ դուռն և համար-  
ձակ ճանապարհն:

Անձուկ դուռնն և նեղ ճա-  
նապարհն:

Բազումք:

Սակաւք:

## ԵՕԹՆԵԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

### ԲՆԱԳԻՐ.

1. Գան ի Բեթսայիդա,  
և ածեն առաջն նորա՝ կոյր  
մի, և աղաչէին զնա զի  
մերձեսցի ի նա:

2. Եւ առեալ զձեռա-  
նէ կուրին՝ եհան արտաքոյ  
շինին, եթուք յաչս նորա  
և ձեռն եդ ի վերայ նորա,  
և հարցանէր ցնա թէ տե-  
սանիցէ՞ ինչ:

3. Բացաւ և ասէ. Տե-  
սանեմ՝ զմարդիկս զի շրջին՝  
իբրև զծառս:

4. Դարձեալ եդ ձեռս  
ի վերայ աչաց նորա. եբաց  
և տեսանէր, ողջացաւ և  
տեսանէր համարձակ զա-  
մենայն:

5. Արձակեաց զնա ի տուն  
իւր և ասէ. Երթ ի տուն

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Բեթսայիդա զիւզն  
որ եկան, կոյր մի բերին  
նորա առաջն ու կաղաչէին  
որ դպչի նորա:

2. Բռնեց կուրի ձեռ-  
քէն, հանեց նորան զեղէն  
դուրս, աչքին վերայ թուք  
արաւ, ձեռքը վերան դրաւ  
ու կհարցանէր. Բան մի կը-  
տեսնես թէ ոչ:

3. Կուրին աչքը բացուե-  
ցաւ. Այս շրջող (քաղող)  
մարդիկը ծառերու նման  
կտեսնեմ, — ասաց:

4. Նորէն դրաւ ձեռքը  
նորա աչքին վերայ, բացուե-  
ցաւ և սկսաւ տեսնել.  
առողջացաւ, և ամէն բան  
համարձակ կտեսնէր:

5. Յիսուս կոյրը իւր տունը  
դրկեց և ասաց. Տունդ զնա.

քո. և յորժամ ի շէնն  
մտանիցես, մի՛ ումեք ասի-  
ցես ի շինին:

և երբ զիւղը մըտնես,  
զիւղն մէջ ոչ ոքի բան  
չասես:

ԳԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ.

Գան ի զիւղն.. կուգան զիւղն:

— Եկին ի բեթղեհէմ. Բեթղեհէմ  
եկան:

— Եկայք ի սուրբ եկեղեցի. սուրբ  
եկեղեցի եկէք:

Ածել. բերել, տանել:

— Էսձ զնա առ Յիսուս. բերաւ  
նորան Յիսուսի մօտ:

Կոյր կուրի առաջնորդէ. կոյրը  
կուրին կառաջնորդէ:

— Կոյրզկուրայն. կուրութեամբ,  
կուրի պէս:

Աղաչէին զնա. աղաչանք կանէին  
նորան:

— Աղաչանօք. աղաչանքով:

Մերձենալ. մօտենալ, դպչել:

— Մերձաւոր. ընկեր, ազգական:

— Մերձեցարուք առ Աստուած եւ  
մերձեցի առ ձեզ. մօտեցէք  
Աստուծոյ եւ Աստուած կփօ-  
տենայ ձեզ:

— Մերձ ի տուն. տանը մօտ:

Կալաւ զձեռանէ նորա. բռնեց

նորա ձեռքէն:

Եհան զկոյրն. հանեց կոյրը:

Արտաքոյ քաղաքին. քաղաքէն  
դուրս:

— Շէն. զիւղ, զեղ:

— Շինական. զեղացի, զեղջուկ:

— Թքանէին ընդ երեսս նորա.  
երեսը կթըքէին:

Աջօք բացօք. բաց աչքով:

— Առ աչս. աչքի առաջ երեւա-  
լով, իբրեւ երեւոյթ:

Տեսաննս ինչ. բան կտեսնես:

Շրջին մարդիկ. մարդիկ ման կու-  
գան:

— Իբրեւ զմարդիկ. մարդկան պէս:

Իբրեւ եմուտ. երբոր մտաւ:

Ահաւաղիկ ողջացար. ահա առեղ-  
ջացար:

Համարձակ. արձակ, ազատ կեր-  
պով, առանց նեղութեան:

Երթ ի տուն քո. զնա տունդ:

— Չորաւ յերկիր իւր. զնաց իւր  
երկիրը:

Մի մտանիցես անոր. չմտնես այն տեղ:

— Մուտ օրհնեալ Տեսուհ. մտիր Աստուծոյ օրհնած մարդ:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Գան ի Բեթսայիդա.

Ածեն առաջի նորա կոյր մի.

Աղաչէին զնա.

Ձի մերձեսցի ի նա.

Առեալ զձեռանէ կուրին.

Եհան արտաքոյ շինին.

Եթուք յաչս նորա.

Ձեռն եղ ի վերայ նորա.

Հարցանէր զնա թէ տեսանիցէ ինչ.

Բացաւ և ասէ.

Տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին.

Իբրև զծառս.

Գարձեալ եղ ձեռս ի վերայ աչաց նորա.

Եբաց և տեսանէր.

Ողջացաւ և տեսանէր համարձակ զամենայն.

Արձակեաց զնա ի տուն իւր.

Երթ ի տուն քո.

Յորժամ ի շէնն մտանիցես.

Մի՛ ումեք ասիցես ի շինին.

Ո՛չ ումեք. ոչ որի, ոչ մէկ մարդու:

— Ոչ որ լուսւ. ոչ որ զսեց:

Կուգան Բեղսայիդա:

Կերբեն նորա առաջը կոյր մի:

Կաղաչէին նորան:

Որ դպչի նորան:

Բռնեց կուրի ձեռնէն:

Հանեց գիւղէն դուրս:

Թքաւ նորա աչքին վիւայ:

Ձեռքը դրաւ նորա վերայ:

Կհարցանէր նորան թէ բան մի կտեսնէ:

Աչքը բացուեցաւ և աւաց:

Կտեսնեմ այս մարդիկը որ ման կուգան:

Ծառերու պէս:

Նորէն դրաւ ձեռը նորա աչքին վերայ:

Բացուեցաւ աչքն ու կտեսնէր:

Առողջացաւ և համարձակ կրտեսնէր ամէն բան:

Ուղարկեց նորան իւր տունը:

Գնա քո տունդ:

Երբ որ գիւղը մտնես:

Ոչ որի չասես գիւղի մէջ:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞րք էին որք եկին ի բեթ-  
սայիդա.

Զո՞ ածին անդ առաջի Յիսու-  
սի.

Զքնչ խնդրէին ի նմանէ.

Ո՞րպէս բժշկեաց Յիսուս ըղ-  
կոյրն.

Զիւրդ մերձեցաւ յաչս կու-  
րին.

Զքնչ հարցանէր ցնա.

Զքնչ տեսանէր կոյրն.

Ո՞րպէս տեսանէր զմարդիկն.

Զքնչ արար Յիսուս երկրորդ  
անգամ.

Զքնչ եղև ընդ կոյրն.

Ո՞ւր արձակեաց Յիսուս զկոյրն  
երթալ:

Ո՞ւր պատուիրեաց Յիսուս  
չասել զիրան ի շինին.

Յիսուս և աշակերտքն իւր:

Կոյր մի:

Աղաչէին զնա զի մերձեցի  
կոյրն:

Նախ առեալ զձեռանէ նորա՝  
եհան արտաքոյ շինին:

Եթուք յաչս նորա և ձեռն  
եղ ի վերայ նորա:

Հարցանէր թէ տեսանիցէ ինչ:

Տեսանէր զմարդիկ զի շրջէին:

Իբրև զծառս:

Գարձեալ եղ ձեռս ի վերայ  
աչաց կուրին:

Բացաւ և տեսանէր համար-  
ձակ զամենայն:

Ի տուն իւր, երթ, ասէ, ի տուն  
քո:

Եւ ոչ ումեք:

ԵՐԹՆԵԱԿ ԵՐԹՆԵՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԿ ԻՐ

1. Իբրև հմուտ Յիսուս

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Երբ Յիսուս նաւակը

ի նաւն, թողին աշակերտքն  
զժողովուրդն, առին զնա  
նաւաւն հանդերձ, և զայլ  
ևս նաւսն որ էին ընդ նմա,  
և զնացին: Եւ մինչդեռ  
նաւէին՝ ի քուն եմուտ Յիսուս

2. Եւ էջ մրրիկ հողմոյ ի  
ծովակն և ուռնոյր. և ա-  
հա շարժումն մեծ եղև ի  
ծովուն՝ մինչ նաւին ծած-  
կել յալեաց անտի, և ինքն  
ննջէր ի խելս նաւին ի վե-  
րայ բարձի:

3. Եւ մատուցեալ աշա-  
կերտքն յարուցին զնա և  
ասեն. Վարդապետ, ոչինչ է  
քեզ փոյթ. փրկեա զմեզ,  
զի կորնչիմք աւասիկ: Եւ  
ասէ ցնոսա Յիսուս. Ընդէր  
վատասիրտ էք, սակաւա-  
հաւատք:

4. Յայնժամ յարուցեալ  
սաստեաց հողմոցն և ծո-  
վուն, և ասէ. Դադարեա՛,

մտաւ, աշակերտները թո-  
ղին ժողովուրդը, առին զին-  
քը նաւակովը, և նորա հետ  
եղած միւս նաւակները և  
զընացին: Մինչդեռ նաւով  
առաջ կգնային, Յիսուս  
քուն եղաւ:

2. Ծովակին վերայ փոթո-  
րիկ ելաւ ու սկսաւ այլևի-  
ծիլ. ուստի մեծ շարժմունք  
եղաւ ծովակի երեսը, այն-  
պէս որ նաւակը ալիքներէն  
կրճած կուէր. իսկ ինքը նա-  
ւակին ետևի կողմը բար-  
ձի վերայ կ'ննջէր:

3. Աշակերտները մտ  
զնացին, զարթուցին նորան  
ուսացին. Վարդապետ, քո  
հոգի չէ ամենեւին. ազա-  
տէ մեզ, որովհետև կոր-  
չում ենք: Յիսուս ասաց.  
Թերահաւատներ, ինչո՞ւ  
վախկոտ էք:

4. Այն ժամանակ ելաւ  
սաստեց հովերուն և ծովուն  
և ասաց. Հանդարտէ՛,

կարկեաց: Եւ դադարեաց  
հողմն, եւ եղև խաղաղու-  
թիւն մեծ:

5. Եւ ասէ ցնոսա. Ա՞ր է  
են հաւատք ձեր. չե՞ւ ևս  
ունիք հաւատս: Եւ մարդի-  
կըն զահի հարեալ զար-  
մացան, և ասէին ցմիմեանս.  
Որպիսի՞ ոք իցէ սա, զի և  
հողմք և ծով հնազանդին  
ամա:

ձայնդ քաշէ: Հովը դադարե-  
ցաւ և մեծ հանդարտու-  
թիւն եղաւ:

5. Յիսուս ասաց. Ա՞ր է  
ձեր հաւատքը. մինչև  
ցայժմ հաւատք չունիք: Իսկ  
մարդիկն զարհուրեցան,  
ապշեցան ու կասէին իրա-  
րու. Ենչպիսի՞ մարդ է ար-  
դեօք սա, որ հովերն ու ծովն  
ևս կը հնազանդին սորան:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ.

Ի նաէ անտի. նաէն, նաուն  
վրայէն:

—Նաուղիդ. նաւը կառավարող,  
նաւապետ:

—Նաւել. նաւով երթալ:

—Նաւան հանդերձ. նաւուն հետ  
իմրասին:

—Աշակերտօքն հանդերձ. աշա-  
կերտներուն հետ մրասին:

Զայլ եւս մարդիկն. նաեւ միւս  
մարդիկը:

Ընդ նմա գնացին. նորա հետ զը-  
նացին:

Մինչդեռ. երբ որ, քանի որ:

—Մինչդեռ ուտէին. երբոր ուտե-  
լու հետ էին:

Էջ ի լեռնէ անտի. իջաւ լեռնէն:

—Էջ ի խոնահր. վար իջիր:

—Իջի ես յերկնից. ես երկնքէն  
իջայ:

Մրրիկ. փոթորիկ:

—Մրրկեալ նեղարտութիւն. փո-  
թորկի նման բարկութիւն:

—Մրրկածուփ. փոթորիկով զար-  
կուած:

Հողմ. հով, քամի:

—Եղեգն շարժուն ի հողմոյ. հո-  
վէն շարժող եղեգ:

— Հողմակար. հովէն բշուած:  
 Ծովակ. փոքր ծով, լիճ:  
 — Առ ծովակին Տիբերիա. Տիբերիա ծովակին մօտ:  
 Ուռնուլ. ուռիլ, բարձրանալ:  
 Շարժումն մեծ եղև. մեծ շարժեղաւ:  
 — Ալեկոծիմ. ալիքներէ կծեծուիմ:  
 Ննջել. բռն վնիլ:  
 — Ննջեաց զբռն արդարոց. արդարոց բռնը քնացաւ, վախճանեցաւ:  
 Խելը նաւին. նաւին զլուխը:  
 Մատչիմ, կփօտենամ, մօտ կերթամ:  
 — Մատեաւ առ նա աղախին մի. աղախին մի մօտեցաւ նորան:  
 — Մատուցանէին առ նա մանկտի. տղայք կբերէին նորա մօտը:  
 — Մատիք առ Տէր. մօտեցէք Աստուծոյ:  
 Յառնել. արթնանալ, ելնել:  
 — Յարեայ. վեր կեցայ, ելայ:  
 Փոյթ մեծ է ինձ. մեծ հող կբա-

շեմ:  
 — Փոյթ կալջիր. ջանք արա:  
 Փրկեա զանձն բո. ազատէ ինքը քեզ:  
 Կորուսեալ ոչխար. կորսուած ոչխար:  
 — Կորուսեալ էր եւ գտաւ. կորսուած էր ու գտանուեցաւ:  
 Ընդէր եկիր այսր. ինչո՞ւ եկար այստեղ:  
 Ընդէր տրտում ես. ինչու տխուր ես  
 Սաստել. բարկութեամբ հանդիմանել:  
 — Սաստեցէ ի քեզ Տէր. Աստուած յանդիմանէ քեզ:  
 Կարկիմ. ձայնը քաշիլ, լռել:  
 — Կարկեցաւ լեզու նորա. լեզուն բռնուեցաւ, բերանը փակուեցաւ:  
 Զահի հարկանիմ. զարհուրիլ, սարսափիլ:  
 Յմիմեանս. իրարու, մէկմէկու:

ԻԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Իբրև եմուա Յիսուս ի նաւն.  
 Թողին աշակերտքն զժողովուրդն.

Երբ որ մտաւ Յիսուս նաւը:  
 Թողին աշակերտները ժողովուրդը:

Առին զնա նաւան հանդերձ.  
Եւ զայլ ևս նաւան.  
Որ էին ընդ նմա.  
Մինչդեռ նաւէին.  
Ի քուն եմուտ Յիսուս.  
Էջ մրրիկ հողմոյ ի ծովակն.  
Ծովակն ուռնոյր.  
Շարժումն մեծ եղև ի ծովուն.  
Մինչ նաւին ծածկել յալեաց  
անտի:  
Ինքն ննջէր ի խելս նաւին.  
Ի վերայ բարձի.  
Մատուցեալ աշակերտքն.  
Յարուցին զնա.  
Վարդապետ, ոչ ինչ է քեզ  
փոյթ.  
Փրկեա զմեզ.  
Զի կորնչիմք աւասիկ.  
Ասէ ցնոսա Յիսուս.  
Ընդէր վատասիտք էք, սա-  
կաւահաւատք.  
Յայնժամ յարուցեալ սաս-  
տեաց հողմոցն և ծովուն.  
Եւ ասէ. Դադարեա, կարկեաց.  
Դադարեաց հողմն.  
Եւ եղաւ խաղաղութիւն մեծ.

Առին նորան նաւակոյլը:  
Ուրիշ նաւերն ևս:  
Որ նորա հետ էին:  
Երբ որ կնաւէին:  
Յիսուս քուն եղաւ:  
Փոթորիկ ելաւ ծովակին վե-  
րայ:  
Ծովակը կուռէր:  
Մեծ շարժումնք եղաւ ծովուն  
մէջ:  
Այնպէս որ նաւակն ալիքնե-  
րէն կըծածկուէր:  
Ինքը քուն կլինէր նաւին զը-  
լուսը:  
Բարձի վերայ:  
Աշակերտները մօտն եկած:  
Արթընցուցին իրեն:  
Վարդապետ, ամենևին հոգդ  
չէ:  
Աղատէ մեզ:  
Վասն զի ահա կորսուելու  
վերայ եմք:  
Ասաց նոցա Յիսուս:  
Ինչո՞ւ վախկոտ էք, թերահա-  
ւատներ:  
Այն ժամանակ ելաւ, սաստեց  
հովերուն և ծովուն:  
Դադարէ, ձայնդ քաշէ, սասաց:  
Հովը դադարեցաւ:  
Մեծ հանդարտութիւն եղաւ:

Ո՞ւր են հաւատք ձեր,  
Չեւ ես ունիք հաւատս.  
Մարդիկն զահլի հարեալ զար-  
մացան:  
Ասէին ցմբմեանս.  
Որպիսի սք իցէ սա.  
Զի և հողմք և ծով հնազան-  
դին սմա.

Ո՞ւր է ձեր հաւատքը:  
Տակաւին հաւատք չունիք:  
Մարդիկը սարսափեցան և  
զարմացան:  
Կասէին իրարու:  
Ինչպիսի մարդ է սա:  
Որ հովերն ու ծովը կհնազան-  
դին սորան:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ՁՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Ո՞ւր եմուտ Յիսուս.  
Ո՞ էր որ եմուտ ի նաւն.  
Զո՞ թողին աշակերտքն.  
Զո՞ առին ընդ իւրեանս.  
Զիսորդ առին աշակերտքն ըզ-  
Յիսուս.  
Ե՞րբ ի քուն եմուտ Յիսուս.  
Զինչ արար Յիսուս, մինչդեռ  
նաւէին:  
Զինչ էջ ի ծովակն.  
Զինչ վինէր ծովակն.  
Ուր եղև շարժումն մեծ.  
Ուստի՞ ծածկեր նաւն.  
Ո՞ւր ննջէր Յիսուս.  
  
Զինչ արարին աշակերտքն.  
Զինչ կոչեաց զնոսա Յիսուս  
ի յանդիմանել իւրում.  
Ո՞ւմ սաստեաց Յիսուս.

Ի նաւ:  
Յիսուս:  
Զժողովուրդն:  
ԶՅիսուս:  
Նաւաւն հանդերձ:  
  
Մինչդեռ նաւէին:  
Ի քուն եմուտ:  
  
Մըրիկ հողմոյ:  
Ուռնոյր:  
Ի ծովուն:  
Յալեաց անտի:  
Ի խելս նաւին ի վերայ բար-  
ձի:  
Մատուցեալ յարուցին զնա:  
Սակաւահաւատս և վատա-  
սիրտս:  
Հողմոցն և ծովուն:

Ձի՛նչ ասաց ի սաստեղն:

Ձի՛նչ եղև յետ այնօրիկ:

Զո՞ր հարցումն արար Յիսուս  
աշակերտացն:

Մարդիկն զի՛նչ արարին.

Ձի՛նչ ասէին ցմիմեանս.

Ղազարեանց, կարկեանց:

Ղազարեաց հողմն և եղև խա-  
ղաղութիւն մեծ:

Ո՞ւր են, ասէ, հաւատք ձեր.  
չնւ ևս ունիք հաւատս:

Զահի հարեալ զարմացան:  
Որպիւրի՞ ոք իցէ սա, զի և հողմք  
և ծով հնազանդին սմա:

## ԵՕԹՆԵՍԱԿ ՈՒԹԵՐՈՐԳ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԹ

6

1. Այր ոմն էր մեծա-  
տուն, և ազանէր բեհեզս  
և ծիրանիս, և ուրախ լի-  
նէր հանապազ առատա-  
պէս:

2. Եւ աղքատ ոմն անուն  
Ղազարոս՝ անկեալ զնէր առ  
դրան նորա վիրաւորեալ.  
և ցանկայր յազել ի վրշ-  
րանացն որ անկանէին ի  
սեղանոյ մեծատանն:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Հարուստ մարդ մի  
կար, բեհեզներ ու ծիրա-  
նիներ կը հազնէր, և միշտ  
առատապէս ուրախ օրեր  
կանցընէր:

2 Ղազարոս անունով  
աղքատ մի ևս նորա զրան  
առաջն ընկած կը կենար,  
վրան գլուխը վէրքերով լը-  
ցուած, և կը վաւիակէր որ  
հարուստին սեղանէն թափ-  
թըված վշրանքներովը փո-  
րը կշտացնէ:

3. Այլ և շուրջ ևս գայ-  
ին եւ շնորհիւն զվէրս նորա:

3. Բայցի սորանից շներ ևս  
կու գային և նորա վէրքերը  
կը լզէին:

ԳԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Առն ուրումն. մէկ մարդու:  
— Արք ոմանք. քանի մի մարդիկ:  
— Արք երկու. երկու հողի:  
— Յարանց յայսցանէ. այս մար-  
դիկներէն:  
Մեծատանց. հարուստներու:  
— Մեծատան. հարուստի:  
Ազանել. հագնել:  
Ազանելիք. հագուստ:  
— Ազանիմ. իջեւանել:  
Առ մեզ ազիր. մեր տունը իջիր:  
Բեհեզ. ազնիւ բարակ կտաւ:  
Ծիրանի. ազնիւ կարմիր շոր.  
Ուրախ լինել. ուրախութիւն անել,  
ուրախանալ:  
— Ուրախ եղէ. ուրախացայ:  
Հանապաղ. միշտ, ամէն ժամա-

նակ:  
— Հանապաղորդ. մշտական, ամէն  
օրուան:  
Աղքատ ոմն, աղքատ մի:  
Անկանիւ. ընկնել:  
— Անկեալ դնիմ. ընկած կմնամ:  
Առ դրան. դրանը մօտ:  
— Դրանէ ի դուռն. դռնէ դուռը:  
— Դրօքն փակելովք. դռները փակ  
լինելով.  
Վիրաւոր. վէրք ունեցող:  
— Վէր. վէրք, խոց:  
— Ի վիրաց անտի. այն վերքէն:  
Յագել. կշտանալ:  
— Յագեցան. կշտացան:  
— Յագեցուցանել. կշտացնել:  
Լեզու. լիզել, լզել:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Այր ոմն էր մեծատուն.  
Ազանէր բեհեզս և ծիրանիս.

Մարդ մի կար հարուստ:  
Բեհեզներ և ծիրանիներ կը-  
հագնէր:

Ուրախ լինէր հանապազ ա-  
ռատապէս.

Աղքատ ոմն.

Անուն Ղազարոս.

Անկեալ զնէր վիրաւորեալ.

Առ զբան նորա.

Յանկանայր յագեւ:

Ի փշրանացն.

Որ անկանէին.

Ի սեղանոյ մեծատանն.

Շունք ևս գային: ❷

Լեզուին զվէրս նորա.

Ուրախ կլինէր (կուրախանար)  
միշտ առատ կերպով:

Աղքատ մի, աղքատին մէկը:

Անունը Ղազարոս, Ղազարոս  
անունով:

Ընկած էր վէրքերով լցուած:

Նորա զբան մօտ, նորա զբան  
առաջը:

Կփափագէր որ կշտանայ:

Փշրանքներէն:

Որ կթափուէին:

Հարուստին սեղանէն:

Շներն ևս կուգային:

Նորա վէրքերը կը լիզէին:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Ո՞վ էր մեծատուն.

Զինչ էր այրն այն.

Զինչ ազանէր մեծատունն.

Ե՞րբ ուրախ լինէր մեծատունն

Ո՞րպէս ուրախ լինէր.

Ո՞ էր Ղազարոս.

Զինչ անուն էր աղքատին.

Զինչ առնէր աղքատն այն.

Ո՞ւր անկեալ զնէր Ղազարոս.

Ո՞րպէս անկեալ զնէր.

Զինչ խորհէր կամ զինչ կամէր  
Ղազարոս.

Այր ոմն:

Մեծատուն էր:

Բեհեզս և ծիրանիս:

Հանապազ:

Առատապէս:

Աղքատ ոմն էր:

Ղազարոս:

Անկեալ զնէր:

Առ զբան մեծատանն:

Վիրաւորեալ:

Յանկայր յագեւ ի փշրանացն  
որ անկանէին ի սեղանոյ  
մեծատանն:

Ուստի ցանկայր յագել Ղա-  
ղորոս .

Յորոց փշրանաց ցանկայր  
յագել .

Ուստի անկանէին փշրանքն .

Ո՞յր էր սեղանն այն .

Զինչ առնէին շունք .

Առ ո՞ գային շունք .

Զինչ լեղուին :

Ի փշրանաց :

Յայնցանէ որ անկանէին ի  
սեղանոյ մեծատանն :

Ի սեղանոյ մեծատանն :

Մեծատանն էր :

Գային և լեղուին զվէրս նո-  
րա :

Առ Ղաղարոս :

Զվէրս նորա :

## ԵՕԹՆԵԱԿ ԻՆՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա .

ԲՆԱԳԻԻ

1. Եւ եղև մեռանել աղ-  
քատին, և տանել հրեշ-  
տակաց զնա ի գողն Սբրա-  
համու: Մեռաւ և մեծա-  
տունն և թաղեցաւ, և ի  
դժոխսն ամբարձ զաչս իւր  
մինչ ի տանջանսն էր:

2. Ետես զԱբրահամ ի  
հեռաստանէ, և զՂաղարոս  
ի գող նորա հանգուցեալ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ

1. Եղաւ որ աղքատը մե-  
ռաւ, և հրեշտակները Աբ-  
րահամու գողը տարին նո-  
րան: Հարուստն ևս մեռաւ  
և թաղուեցաւ. դժոխքին  
մէջ աչքերը վեր վերուց՝  
երբ որ տանջանքի մէջ էր:

2. Հեռուէն տեսաւ Աբ-  
րահամ (նահապետը), Ղա-  
ղարոսն ևս նորա գողը  
նստած:

3. Եւ նա աղաղակեաց և  
ասէ. «Հայր Աբրահամ, ու  
ղորմեա՛ ինձ, և առաքեա  
զՂազարոս:

4. Զի թացցէ զծաղ մա-  
տին իւրոյ ի ջուր, և զը-  
վացուսցէ զլեզու իմ, զի  
պապակիմ ի տապոյ աստի:

3. Աղաղակեց հարուստն  
և ասաց. Հայր Աբրահամ,  
ողորմէ՛ ինձ, և Ղազարոսը  
զրկէ:

4. Որ մատին ծայրը ջրի  
մէջ թրջէ և լեզուն զովա-  
ցընէ. վասն զի այս տաքու-  
թենէն կը պապակիմ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Մեռցի. պիտի մեռնի, Թող մեռ-  
նի:

— Մեռուցանել. մեռցնել, սպա-  
նել:

Հրեշտակօք. հրեշտակներով:

— Հրեշտակ Տևառն. Աստուծոյ  
հրեշտակը:

Գող. զիրկ:

— Ի դժոխոց. դժոխքէն:

Ամբառնալ. վերցնել, վեր վերցնել:  
Հեռաստան. հեռու տեղ:

— Ի հեռաստան վայրաց. հեռու-  
ուր տեղերէ:

Հանգչիլ. հանգստանալ, հանգիստ  
նստել:

— Ես հանգուցից զձեզ. ես կը-  
հանգստացնեմ ձեզ:

Աղաղակել. կանչել, բարձր ծայ-  
նով ասել:

— Աղիողորմ ծայնիւ. ողորմուկ  
ծայնով, խեղճ ծայնով:

— Ողորմիմ քեզ. կցաւիմ վերադ:

— Ողորմեցարուք ո՛ր բարեկամք.  
ողորմեցէք ո՛վ բարեկամներ:

Առաքել. ուղարկել, զրկել:

— Առաքեալ. յուղարկուած, դես-  
պան, պատգամաւոր:

Թանալ. Թրջել:

— Թացից զպատառն եւ տաց.  
Թաթխեմ պատառը եւ տամ:

Ծաղ. ծայր:

— Ծաղիւ մատին. մատի ծայ-  
րով:

— Մինչեւ ի ծագս աշխարհիս.

մինչեւ աշխարհիս ծայրերը:  
— Ծագէ ի ծագ. ծայրէ ծայր:  
— Մատամբ իւրեանց. իւրեանց  
մատովը:  
— Մատունք ձեռաց. ձեռքի մա-  
տերը:  
— Մատնցոյց առնել. մատով ցուց-  
նել:

Զովացուցանել. հովացնել:  
Պապակիլ. սաստիկ ծարաւ քա-  
շել:  
Տապ. սաստիկ տարուծիւն:  
— Հողմ տապախառն. սաստիկ  
տար քամի:  
— Ի տապոյ արեգական. արեւուն  
տարուծենէն:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Մեռանել աղքատին.  
Տանել հրեշտակաց զնա.  
Ի գոգն Աբրահամու.  
Մեռաւ և մեծատունն.  
Թաղեցաւ.  
Ի դժոխան.  
Ամբարձ զաչս իւր.  
Մինչ ի տանջանսն էր.  
Ետես զԱբրահամ.  
Ի Հեռաստանէ.  
Ետես զՂազարոս.  
Ի գոգ նորա.  
Հանդուցեալ.  
Նա աղաղակեաց և ասէ.  
Հայր Աբրահամ, ողորմեա ինձ.  
Առաքեա զՂազարոս.  
Զի թացցէ զձագ մատին իւրոյ  
ի ջուր.

Աղքատին մեռնիլը.  
Հրեշտակներուն նբան տանիլը  
Աբրահամու գոգը, գիրիլը:  
Հարուստն ևս մեռաւ:  
Թաղուեցաւ:  
Գժոխքին մէջ:  
Աչքերը վերուց:  
Երբ որ տանջանքի մէջ էր.  
Աբրահամը տեսաւ:  
Հեռուէն, հեռուանց:  
Ղազարոսը տեսաւ:  
Նորա գոգը, նորա գիրիլը:  
Հանդչած, նստած:  
Նա աղաղակեց և ասաց:  
Հայր Աբրահամ, ողորմէ ինձ:  
Դիկէ Ղազարոսը:  
Որ մատին ծայրը թրջէ ջրի  
մէջ:

Զովացուցէ զլեզու իմ.  
Զի պապակիմ ի տապոյ աս-  
տի.

Լեզուս զովացնէ, պաղեցընէ:  
Վասն զի կպապակիմ այս  
տաքութենէն:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ:

Զինչ եղև աղքատին.

Մեռանել, և տանել հրեշտա-  
կաց զնա:

Ո՞ւր տարան հրեշտակք զՂա-  
զարոս:

Ա. գոգն Աբրահամու:

Զինչ եղև մեծատանն.

Մեռաւ և թաղեցաւ:

Ո՞ւր ամբարձ մեծատունն  
զաչս իւր.

Ի դժոխս:

Ե՞րբ.

Մինչ ի տանջանսն էր:

Զ՞ ետես.

ԶԱբրահամ:

Ուստի՞ ետես զԱբրահամ.

Ի հեռաստանէ:

Ո՞ւր ետես զՂազարոս:

Ի գոգն Աբրահամու հանգու-  
ցեալ:

Զինչ արար մեծատունն.

Աղաղակեաց:

Զինչ ասաց ցԱբրահամ.

Ողորմեա ինձ և առաքեա ըզ-  
Ղազարոս:

Ընդէր խնդրեաց առաքել ըզ-  
Ղազարոս:

Զի թացցէ զծագ մատին իւ-  
րոյ ի ջուր և զովացուցէ  
զլեզու նորա:

Վասն էր խնդրէր զովացու-  
ցանել զլեզու նորա:

Զի պապակիմ, ասէր, ի տա-  
պոյ աստի:

# ԵՕԹՆԵԱԿ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ, յիշեա զի ընկալար արդէն զքարիս քո ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս:

2. Եւ ի վերայ այսր ամենայնի վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ, եթէ կացմինն աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ այտի ոք առ մեզ անցանել:

3. Եւ ասէ. Արդ աղաչեմ զքեզ, հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. են իմ այդ եղբարք հինգ. որպէս զի տացէ նոցա վկա-

1. Աբրահամն ասաց հարուստին. Որդեակ, միտքդ բեր որ դուն քոյ լաւութեանցդ փոխարէնը առիր կենդանութեանդ ժամանակ, իսկ Ղազարոս չարչարանք (առաւ). այժմ սա այստեղ կը մխիթարուի, իսկ դուն այդտեղ կը պապակիս:

2. Բաց յայսմանէ, մեր մէջն ու ձեր մէջ ահազին անդունդ կայ, եթէ կամենայ մէկն աստի ձեզ անցնիլ՝ չէ կարող, և ոչ այտի կարող է մէկը մեզ անցնիլ:

3. Հարուստն ասաց. Ուրեմն կաղաչեմ քեզ, հայր Աբրահամ, թող որ երթայ դա իմ հօրս տունը. այնտեղ ես հինգ եղբայր ու-

յուրթիւն, զի մի և նորա  
գայցեն յայս տեղի տան-  
ջանաց.

4. Եւ ասէ Աբրահամ.  
Ունին զՄովսէս և զմար-  
գարէս, նոցա լուիցեն: Եւ  
նա ասէ. Ոչ, հայր Աբրա-  
համ. բայց եթէ ի մեռե-  
լոց ոք երթիցէ առ նոսա,  
և ապաշխարեսցին:

5. Եւ ասէ ցնա. Եթէ  
Մովսեսի և մարգարէիցն  
ոչ լինն, և ոչ թէ ի մե-  
ռելոց ոք յառնիցէ՝ հա-  
ւատասցին:

նիմ. իմացնէ նոցա, որ մի  
զուցէ նորա ևս զան այս  
տանջանքի տեղը:

4. Պատասխանեց Աբրա-  
համ. Մովսէսն ու մար-  
գարէները նոցա մօտ են.  
Թող նոցա խօսքերուն մտիկ  
անեն: Ասաց հարուստը: Ոչ,  
հայր Աբրահամ. բայց թէ  
մեռալն երէն մինը երթայ  
նոցա, կապաշխարեն:

5. Աբրահամ ասաց նորան.  
Թէ որ Մովսէսի և մարգա-  
րէից (խօսքերուն) մըտիկ  
չեն տար, նորա այս բանիս  
ևս չեն հաւատար թէ մե-  
ռած մարդը յարութիւն  
կառնու:

ԲԱՌԱՐԱՆ

- Յիշեցաք զմեզ. յիշէ մնդ:
- Յիշեցին զբանն նորա. յիշեցին  
նորա այն խօսքերը:
- Ընկալ. ընդունէ, առ:
- Ընկալարուք զխրատ. խրատ  
առէք:

- Ընկալցուք. ընդունիմք, պիտի  
ընդունիմք:
- Անդէն. այն տեղը, այն աշխարհը,  
անդին:
- Աստէն. այս աշխարհս, այս  
տեղ:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ւր ընկալաւ մեծատունն ըզ-  
բարխա իւր:

Ղազարոս զինչ ընկալաւ ի  
կեանքս իւր:

Զինչ առնէր Ղազարոս ի գո-  
ղին Աբրահամու:

Եւ զինչ մեծատունն ի դժո-  
խքս:

Զինչ կայր ընդ Աբրահամ և  
ընդ մեծատունն:

Վարեն անցանել ի գողոյն Աբ-  
րահամու ի դժոխս:

Զո՞ւր ազաչէր մեծատունն:

Զինչ խնդրէր ի նմանէ:

Քանի կղբարք էին մեծատանն

Ո՞ւր էին կղբարք մեծատանն:

Է՞ր վառն խնդրէր մեծատունն  
արձակել զՂազարոս առ  
կղբարս իւր:

Աւ ինչ պիտոյ էր վկայու-  
թիւնն Ղազարու կղբարց  
մեծատանն:

Զինչ անուանէր մեծատունն  
զդժոխս:

Զո՞ւր ունէին կղբարք մեծատանն  
վկայ:

Անդէն ի կեանս իւր:

Զչարչարանս:

Ղազարոս մխիթարէր ի դողն  
Աբրահամու:

Մեծատունն ի դժոխս պապա-  
կէր:

Վի՛հ մեծ:

Ոչ կարեն:

Զարբահամ:

Զի արձակեսցէ զՂազարոս ի  
առն հօր իւրոյ:

Հինգ:

Ի տան հօր նորա:

Որպէս զի տացէ նոցա վկա-  
յուլթիւն:

Զի մի և նոքա երթիցեն յայն-  
տեղի տանջանաց:

Տեղի տանջանաց:

ԶՄուխէս և զմարդարէս:

կողմանէ:

— Առակաւոր բանիւ. խորհրդա-  
ւոր խօսքով:

Արկ զքեզ աստի ի վայր. ձգէ  
քեզ աստի վայր:

Առն միոջ, մի մարդու:

— Աքք հինգ, հինգ մարդ, հինգ  
հոգի:

Սերմանել. ցանել:

— Սերմն. սկրմ, հունտ:

— Սերմանացան. սերմ ցանող:

Ագարակ. արտ, հանդ, անդաս-  
տան:

— Գայր յագարակէ. հանդէն կու-  
գար:

Որոմն. որոմ, վնասակար խոտ:

— Որոմնացան. որոմցանող. բան-  
սարկու:

Բուսանել. բուսնիլ, աճել:

— Բոյս. բուսած բան, խոտ:

— Բարերոյս, բոյսը, բարքը բու:

— Առնել զպտուղ. պտուղ տալ.  
բերք բերել:

Մատչիմ. մօտենալ:

— Մատն այսր. այստեղ բեր:

— Մատուցին պատարապս. ըն-  
ծաներ, պարզեւներ տուին:

Տանուտէր. տանտէր:

— Տանուտեսրք. տանտէրեր:

Քաղել. հանել, փրցնել, խլել:

Ի բաց. դուրս, մէկդի:

Գուցէ. կարելի է թէ:

Ի բաց խլել. քաղել, հանել:

Թոյլ տուր. թողտուր, թող:

— Յերկոցունց ձեռաց աջողակ.  
երկու ձեռքն եւս յաջողակ բա-  
նեցընող:

Ի միասին. միատեղ:

— Յաւուրս հնձոց ցորենոյ. ցորեն  
հնձելու օրերը:

Խուրձ. կապած խոտեր, կապոց:

— Խուրձս խուրձս. կապոց կապոց:

Շտեմարան. ամբար, մթերանոց:

— Քակեցից զշտեմարանս իմ. շտե-  
մարաններս քակեմ:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐՄԱՆՈՒԹԵԱՆ

Այլ առակ արկ առ նոսա,  
Նմանեցաւ արքայութիւն երկ-  
նից առն.  
Որ սերմանիցէ սերմն բարի.

Ուրիշ օրինակ բերաւնոցա:  
Երկնից թագաւորութիւնը  
մարդու մի նմանեցաւ:  
Որ լաւ հուշտ ցանէ:

Յագարակի՛ իւրում:

Ի քուն լինել մարդկանն,

Եկն թշնամի՛ն նորա.

Յանեաց ի վերայ որոմ.

Ի մէջ ցորենոյն.

Իբրև բուսաւ խոտն.

Արար ստուղ.

Ապա երեցաւ և որոմնն.

Մատուցեալ ծառայք տանու-  
տեառնն

Ասնն ցնա.

Տէր, ո՛չ սերմն բարի սերմա-  
նեցեր յագարակին քում.

Արդ ուսաթի ունիցի զորոմնն.

Եւ նա ասէ ցնոսա.

Այր թշնամի արար զայն.

Ասնն ցնա ծառայքն.

Կամիս զի երթիցուք քաղես-  
ցուք զայն ի բաց.

Եւ նա ասէ ցնոսա. Մի.

Դուցէ մինչ քաղիցէք զորոմնն.

Եւ զցորեանն ընդ նմին ի բաց  
խլիցէք.

Թող տուք երկոցունցն աճել  
ի միասին.

Մինչև ի հունձս.

Իւր ագարակին մէջ:

Մարդկանց քուն եղած ժա-  
մանակը:

Եկաւ նորա թշնամի՛ն:

Վերան որոմ ցանեց:

Յորենին մէջ:

Եբբ որ խոտը բուսաւ:

Պտուղ տուաւ:

Յետոյ երեան ելաւ որոմն ևս:  
Տանտիրոջ ծառաները մօտե-  
ցան:

Ասացին նորան:

Տէր, լաւ սերմ չէ՛ր որ ցանե-  
ցիր ագարակիդ մէջ:

Ուրեմն մէջի որոմն ուրտե-  
ղէն է:

Իսկ նա ասաց նոցա:

Թշնամի մարդն արաւ այն:

Մառանները ասացին նորան:

Կուղեն որ երթամք, այն (ո-  
րոմը) քաղեմք հանեմք:

Իսկ նա ասաց նոցա. Ոչ.

Չլինի թէ որոմը քաղելոյ ժա-  
մանակ:

Յորենն ևս նորա հետ խլէք  
հանէք.

Թողէք որ երկունս ևս աճին  
ի միասին:

Մինչև հունձքի ժամանակը:

Ի ժամանակի հնձոցն ասացից  
ցհնձողսն .

Քաղեցէք նախ զորումնդ .

Կապեցէք զայդ խրճուհս առ  
ի յայրել .

Զցորեանն ժողովեցէք ի շտե-  
մարանս իմ .

Հունձքի ժամանակը կասեմ  
հրնձողներուն :

Առաջ այդ որումը քաղեցէք :

Խուրճ խուրճ կապեցէք այդ  
այրելու համար :

Յորենը իմ շտեմարաններս  
ժողովեցէք :

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ .

Զոր առակ արկ Յիսուս առ  
աշկերտան իւր .

Առ ո՞ արկ զառակն .

Ո՞ էր որ սերմանեաց սերմն  
բարի յազարակի իւրում .

Զինչ սերմանեաց այրն այն .

Ո՞ւր սերմանեաց .

Զինչ առնէին մարդիկն .

Ո՞վ եկն .

Զինչ արար թշնամին .

Ո՞ւր ցանեաց զորումն .

Ե՞րբ երևեցաւ որումնն .

Ո՞րք մատեանս առ տանուտէրն .

Զինչ ասացին ծառայքն .

Զոր պատասխանի կա տա-  
նուտէրն .

Զառակ որումանցն յազարա-  
կի :

Առ աշակերտս իւր :

Այր ոմն :

Սերմն բարի :

Յազարակին իւրում :

Ի քուն էին :

Թշնամին նորա :

Յանեաց զորումնն :

Ի մէջ ցորենոյն :

Իբրև բուսաւ խոտն և արար  
պրատու :

Ծառայք նորա :

Տէր, ո՞չ սերմն բարի սերմա-  
նեցեր յազարակին քում .  
արդ ուստի ունիցի զորումնն :

Այր թշնամի արար զայն :

Ձինչ կամէին ծառայքն առնել.

Տանուտէրն հոնոցա հրաման թէ ոչ.

Որումն և ցորեանն որպէս աճեցին.

Մինչև ցերբ.

Երբ ասել ինչ կամէր տանուտէրն ցհնձողսն:

Յով որ կամէր ասել.

Որպէս տայր կապել զորումն.

Առ ինչ խրճուես տայր կապել.

Ուր ասէր ժողովել զցորեանն

Ձինչ ասէր ժողովել ի շտեմարանս իւր.

Երթալ քաղել զորումն ի բաց: Ոչ. գուցէ, ասէ, մինչ քաղիցէք զորումն՝ և զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք:

Ի միասին:

Մինչև ցհուենս:

Ի ժամանակի հնձոցն:

Յհնձողսն:

Խրճուես:

Առ ի յայրել:

Ի շտեմարանս իւր:

Ձցորեանն:

## ԵՅՐԹՆԵԱԿ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ

1. Իբրև եկին (Յիսուս և աշակերտքն իւր) ի կափառնառւմ, մատեան որք զերկդրամեանն պահանջէին, առ Պետրոս և ասեն. Վարդապետն ձեր ոչ տայ զերկդրամեանն: Եւ ասէ, Այո՛:

1. Երբ որ Յիսուս և աշակերտները կափառնառւմ քաղաքն եկան, երկդրամեանին տուրքը պահանջողները Պետրոսին մօտեցան և ասացին. Ձեր վարդապետը երկդրամեանը չի տար: Նա ասաց թէ՛ Այո՛ (կուտայ):

2. Եւ իբրև եմուտ ի տուն, յառաջիաց քան զնա Յիսուս և ասէ. Զիարդ թուի քեզ, Սիմոն. Թագաւորք ազգաց յումմէ՞ առնուն զհարկս կամ զհասն. որդւոց իւրեանց թէ յօտարաց:

3. Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն:

4. Բայց զի մի դայ թակղեցուսցուր զնոսա, երթ ի ծով և ընկեա կարթ, և զառաջին ձուկն որ ելա նիցէ, առ և բաց զբերան նորա, և գտանիցես սատեր. եւ զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո:

2. Երբ որ տուն մտաւ, Յիսուս Պետրոսէն առաջ անցաւ և ասաց. Ի՞նչպէս կերևի քեզ, Սիմոն. ուրիշ ազգերու թագաւորնբըն հարկերը կամ տուրքը ուստի՞ կառնուն, իւրեանց զլաւակներէն թէ օտարներէն:

3. Երբ որ ասաց թէ օտարներէր, Յիսուս պատասխան տուաւ նորան. Ուրեմն որդիքը տուրքէ ազատ են:

4. Բայց որպէս զի դայ թակղու թիւն չտանք նոցա, զնա ծովն և կարթ ձգէ, առաջին ձուկն որ ելնէ, առ, բերանը բաց, մէջը սատեր կը գտնես. այն կառնուս կուտաս նոցա իմ տեղս ու քոյ տեղդ:

### ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Երկդրամնան. երկուքնոց, երկու դրամնոց փող:

— Զորեքդրամնան. չորս դրամնոց.

2. Եւ իբրև եմուտ ի տուն, յառաջնաց քան զնա Յիսուս և ասէ. Զիսրիթ թուի քեզ, Սիմոն. թագաւորք ազգաց յումմէ՞ առնուն զհարկս կամ զհասն. որդւոց իւրեանց թէ յօտարաց:

3. Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն:

4. Բայց զի մի գայ թակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով և ընկեա կարթ, և զառաջին ձուկն որ ելա նիցէ, առ և բաց զբերան նորա, և գտանիցես սատեր. եւ զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո:

2. Երբ որ տուն մտաւ, Յիսուս Պետրոսէն առաջ անցաւ և ասաց. Ի՞նչպէս կերևի քեզ, Սիմոն. ուրիշ ազգերու թագաւորներն հարկերը կամ տուրքը ուստի՞ կառնուն, իւրեանց զլաւակներէն թէ օտարներէն:

3. Երբ որ ասաց թէ օտարներէր, Յիսուս պատասխան տուաւ նորան. Ուրեմն որդիքը տուրքէ ազատ են:

4. Բայց որպէս զի գայ թակղու թիւն չտանք նոցա, զնա ծովն և կարթ ձգէ, առաջին ձուկն որ ելնէ, առ բերանը բաց, մէջը սատեր կը գտնես. այն կառնուս կուտաս նոցա իմ տեղս ու քոյ տեղդ:

### ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Երկրամեան. երկուքնոց, երկու դրամնոց փող:

— Զորեքդրամեան. չորս դրամնոց:

Յառաջիւ. առաջ անցնիլ, ուրի-  
շէն առաջ բան ասել:  
Զիարդ. ինչպէս:  
— Զիարդ կայք. ինչպէս էք:  
Թուի. կերելի. կկարծուի:  
— Ինձ թուի թէ. ինձ կերելի թէ:  
— Թուէր ծաղր առնել. կարծես  
թէ ծաղրածու թիւն կանէր:  
Յումմէ. որ մարդէն:  
— Ես յումմէ երկեայց. ես ուստի  
պէտք է վախենամ:  
Հարկ. տուրք, տէրութեան դրած  
տուրքը:  
— Հարկս հարկանել, տուրք տալ:  
Հարկատու. տուրք տուող, հարկ  
վճարող:  
— Հաս. եկամուտ, տէրութեան  
տրուելիք բաժին:  
Գայթակղեցուցանել. գայթակղու-  
թիւն տալ, չար օրինակ տալ:

— Մի գայթակղեցուցես դոք. ոչ  
դոք չգայթակղեցընես:  
Ընկենուլ. ձգել, նետել:  
— Ընկեցեալ. ձգուած, երեսէ ըն-  
կած:  
Կարթ. ծուկ բռնելու ճանկ:  
— Կարթընկեց. կարթ ձողոյ:  
Ի ձկանց այդի. այդ ձկներէն:  
— Զուկն որսալ, ծուկ բռնել:  
Սատեր. չորեքդրամեան. տեսալ  
մի հին փող:  
Ընդ իմ եւ ընդ քո. իմ տեղս ու  
քո տեղդ:  
— Ընդ իս եւ ընդ քեզ. իմ մէջ  
ու քո մէջ:  
— Ընդ ծառով. ծառին տակը:  
— Ընդ քեզ է Տէր. Աստուած քո  
հետդ է:  
— Ընդ հուր եւ ընդ ջուր. կրակէ  
ու ջրէ:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Իբրև եկին.  
Ի կափառչառում.  
Ուրք զերկղրամեանն պահան-  
ջէին:  
Մատեան առ Պետրոս:  
Վարդապետն ձեր.  
Ո՛չ տայ զեկղրամեանն:

Եբբոր եկան:  
Կափառչառում քաղաքը:  
Երկղրամեանը պահանջողնե-  
րը:  
Պետրոսի մօտ եկան:  
Զեր վարդապետը:  
Եկղրամեանը չի տար:

Մտուտ ի տուն.

Յառաջեաց քան զնա Յիսուս.

Զիմորդ թուի քեզ, Սիմոն.

Թագաւորք ազգաց.

Յումմէ առնուն զհարկս կամ  
զհասն:

Յորդոնց իւրեանց թէ յօտարաց.

Իբրև ասաց թէ յօտարաց.

Ապա ուրեմն.

Ազատ են որդիքն.

Զի մի՞ գայթակղեցուցուք  
զնոսա:

Երթ ի ծով.

Ընկեա կարթ.

Զառաջին ձուկն որ ելանիցէ՝  
առ.

Բաց զբերան նորա:

Գտանիցես սատեր.

Զայն առեալ տացես նոցա.

Ընդ իմ և ընդ քո.

Տունը մտաւ, ներս մտաւ:

Նորամէն առաջ անցաւ Յի-  
սուս:

Ին՞չպէս կերևի քեզ, Սիմոն:

Ուրիշ ազգաց թագաւորները:

Ուստի կառնուն հարկերը կամ  
տուրքը:

Իրենց զաւակներէն թէ օ-  
տարներէն:

Ելք որ ասաց թէ օտարներէն:

Ուրեմն եթէ այնպէս է:

Որդիքը ազատ են:

Որ նոցա գայթակղութեան  
պատճառ չտամք:

Գնա ծովը:

Կարթ ձգէ:

Առաջին ձուկն որ ելնէ՝ առ:

Նորա բերանը բաց:

Սատեր մի կը գտնես:

Այն կառնուս կուտաս նոցա:

Իմ տեղս և քո տեղդ:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ք էին որ եկինն.

Ո՞ւր եկին.

Ո՞րք մատեան առ Պետրոս.

Զինչ պահանջէին.

Յիսուս և աշկերտքն իւր:

Ի կափառնառու:

Որք զերկզրամեանն պահան-  
ջէին:

Զերկզրամեանն:

Առ ն մատեան.

Որք մատեանն առ Պետրոս՝  
դինչ առնէին.

Զինչ ասացին նորա ցՊետ-  
րոս.

Ո՞ էր վարդապետն Պետրոսի.

Յիսուս տնայր զերկրամեանն.

Ո՞ւր հմուտ Պետրոս.

Զինչ արար Յիսուս.

Զինչ ասաց ցՊետրոս.

Ո՞չք են որ առնուն զհարկս  
կամ զհասն

Յուսմէ՞ առնուն.

Զինչ առնուն թագաւորք ազ-  
գաց յօտարաց.

Որդիքն թագաւորաց զինչ են.

Ո՞չք ին ազատքն ի հարկաց.

Յո՞ առաքեաց Յիսուս զՊետ-  
րոս.

Որպէս առաքեաց.

Առ ինչ առաքեաց.

Զինչ ընկենուլ ի ծով ասաց  
Յիսուս ցՊետրոս.

Զինչ ելանէր ի ծովէն.

Զոր ձուկն առնոյր Պետրոս.

Զինչ առնէր զձուկնն.

Զո՞յր բերանն բանայր Պետ-  
րոս.

Առ Պետրոս:

Զերկրամեանն պահանջէին:

Վարդապետն ձեր ո՞չ տայ  
զերկրամեանն:

Յիսուս:

Այո՞

Ի տուն.

Յառաջեաց քան զՊետրոս և  
ասէ.

Զիարդ թուի քեզ, Միսնն:

Թագաւորք ազգաց:

Յորդոց իւրեանց կամ յօտա-  
րաց:

Զհարկս կամ զհասն:

Ազատ են:

Որդիք թագաւորաց:

Ի ծով:

Ասէ ցնա. երթ ի ծով:

Ընկեա, ասէ, կարթ:

Զկարթ:

Զուկն:

Զառաջին ձուկնն.

Բանայր զբերան նորա:

Զձկանն:

Զինչ զտանէր ի բերան անդ  
ձկանն.

Զինչ արար Պետրոս զսատերն.

Ընդ այր ետ զսատերն.

Սատեր:

Առեալ զայն՝ ետ ընդ Յիսուսի  
և ընդ իւր:

Ընդ Յիսուսի և ընդ իւր:

## ԵՕԹՆԵԱԿ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻԻ

1. Հերովդէս կալաւ ըզ-  
Յովհանէս, կապեաց զնա  
և եղ ի բանտի վասն Հե-  
րովղիայ կնոջ Փիլիպոսի  
եղբօր նորա: Զի ասէր ցնա  
Յովհաննէս. Զէ արժան քեզ  
ունել զդա:

2. Եւ կամէր զնա սպա-  
նանել, բայց երկնչէր ի  
ժողովրդենէ անտի. քան-  
զի իբրև զմարգարէ ունէին  
զնա:

3. Եւ իբրև եղեն ծը-  
նունդք Հերովղի, կաքա-  
ւեաց դուստրն Հերովղիայ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

1. Հերովդէս Յովհանէս  
Մկրտիչը բռնեց, կապեց և  
բանտ դրաւ իւր Փիլիպպոս  
եղբօր Հերովղեա կըն-  
կան պատճառաւ: Որովհե-  
տև Յովհանէս կասէր նորան  
Թէ՛ Պէտք չէ որ դուն մօտդ  
պահես այդ կինը:

2. Հերովդէս կուզէր  
Յովհաննէսը մեռցնել բայց  
ժողովրդէն կվախենար, ու-  
րովհետև տմենքը մարգա-  
րէի տեղ դրած էին նորան:

3. Երբոր Հերովդէսի  
ծննդեան տարեդարձին հան-  
դէսն եղաւ, Հերովղիայի

ի մէջ բաղմանին, և հաճոյ թուեցաւ Հերովլի. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ:

4. Եւ նա յառաջագոյն խրատեալ ի մօրէ իւրմէ Տուր ինձ, ասէ, այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի:

5. Տրամեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն և բարձակցացն հրամայեաց տալ նմա: Եւ առաքեաց զլխատեաց զՅովհաննէս ի բանդի, և բերաւ զլուսնորա սկտեղբ, և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր:

6. Եւ մատուցեալ աշակերտքն նորա բարձին ըզմարմինն և թաղեցին. և եկեալ պատմեցին Յիսուսի:

աղջկը կոչուեքի ժամանակը կաքաւեց և Հերովդէսին հաճոյ եղաւ. ուստի երդում անելով խոստացաւ որ ինչ խնդիրք որ անէ, տայ նորան:

4. Իսկ նա առաջ իւր մօրէն խրատուած լինելով ասաց թէ Յովհաննէս Մկրտչին զլուսը տուր ինձ այստեղ ափսէի վերայ:

5. Թագաւորը տրամեցաւ. բայց արած երդումներուն համար, նստողներէն ևս ամաչելով՝ հրամայեց որ տրուի: մարդ ուղարկեց, Յովհաննէսի զլուսը կտրել տուաւ բանտին մէջ. բերին ափսէով զըլուսը, աղջկանը տուին, և առաւ մօրը տարաւ:

6. Յովհաննէսի աշակերտները գնացին, վերուցին մարմինն և թաղեցին, յետոյ եկան պատմեցին Յիսուսին:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

հալաւ. բռնեց:

— Կալաւ զհոսա դողն. դող ընկաւ նոցա վերայ:

— Կալ զիս հրաժարեալ. զիս հրաժարուածի տեղ զիր:

— Կալ զգիր բո. առ զիրդ, թուղ թըղ:

— Կալ սրուք զդա. բռնեցէք այդ մարդը:

Բանտել. բանտ դնել:

— Բանտարկել. բանտ դրուած:

Բանտարկեալ. բանտ ձգուած:

— Բանտապետ. բանտի վերակալու:

Սպանանել. սպաննել, մեռցընել:

— Կայէն սպան զԱբել. կայէն Արեղ սպաննեց:

— Սպան. սպանէ, մեռցնու:

Ծնունդք. ծնած օրը, ծննդեան տարեդարձը:

Կաբաւել. պարել:

Բազմական. կոչունք, խնջոյք:

— Բազմել. հանդիստ նստել:

Հաճոյ. ախորժելի, ընդունելի:

— Ակնահաճոյ. ախորժելի երեւեցող:

— Մարդահաճոյ. երեսպաշտութիւն սնող:

— Հաճոյք. սրտին ուղածը:

— Յերզմանէդ յայդմանէ. այդ

եղրումէն:

— Երզմանեցուցանել. երզում տալ: Խոստանալ. խօսք տալ:

— Խոստացեալ. խոստացուած:

— Խոստացելոց բարեաց. խոստացուած բարիքներու:

Յառաջագոյն. առաջուանէ, առաջուց:

— Յառաջագոյն բան զտօն Զատիկի. Զատիկի տօնէն առաջ:

Խրատեալ. խրատուած, խրատ առած:

Սլուտեղ. ափսէ, թէփսի:

Բարձակից. հետը նստող, հրաւիրուլ:

— Բարձրնտիր լինիլ. իրարմէ վեր նստելու աշխատիլ:

Գլխատել. զլուխը կտրել:

— Խածատել. խածնելով կտրել:

— Կրճատել. կտրելով կարճեցընել:

Բերաւ. բերուեցաւ:

— Եբեր. բերաւ:

— Բերից. կբերեմ:

— Բերայց. կբերուիմ:

Բարձին. վերուցին:

— Բառնալ. վերցնել:

— Բարձի թողի առնել. երեսի վերայ թողուլ:

ԳԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Հերովդէս կալաւ զՅովհաննէս:

Կապեաց զնա.

Եղ ի բանտի.

Վասն Հերովդիայ.

Կնոջ Փիլիսոպոսի.

Զի ասէր ցնա Յովհաննէս.

Չէ արժան քեզ ունել զղա.

Կամէր զնա սպանանել.

Բայց երկնչէր ի ժողովրդինէ  
անտի.

Քանզի իբրև զմարգարէ ու-  
նէին զնա.

Իբրև եղևն ծնունդքն Հերով-  
դի.

Կարաւեաց դուստրն Հերով-  
դիայ.

Ի մէջ բաղմականին.

Հաճոյ թուեցաւ Հերովդի.

Ուստի և երդմամբ խոստա-  
ցաւ:

Տալ նմա զինչ և խնդրեցէ.

Յառաջագոյն խրատեալ.

Ի մօրէն իւրմէ.

Տուր ինձ ասէ, այսր.

Ի վերայ սկտեղ.

Զգլուխն Յովհաննու Մկրտչի.

Հերովդէս բռնեց Յովհաննէսը:

Կապեց նորան:

Բանտ դրաւ:

Հերովդիայի համար:

Փիլիսոպոսի կնոջ

Վասն զի կասէր նորան Յով-  
հաննէս:

Շվայելիւր քեզ մօտդ պահել  
այդ կինը:

Կուղէր իբն մեռցընել:

Բայց կըլախնաւ ժողովրդէն:

Վասն զի մարգարէի տեղ  
դրած էին նորան:

Երբօր եկաւ Հերովդէսի ծնած  
օրը:

Հերովդիայի աղջիկը խաղաց:

Կոչուեքին մէջ:

Հաճոյ եղաւ Հերովդէսին:

Ուստի երդումով խոստացաւ:

Տալ նորան ինչ որ խնդրէ:

Առաջուց խրատուած:

Իւր մօրէն:

Տուր ինձ, ասաց, այս տեղ:

Ափսէի վերայ:

Յովհաննէս Մկրտչի գլուխը:

Տրամեցաւ թաղաւորն.  
 Վասն երզմանցն.  
 Վասն բարձակցայն.  
 Հրամայեաց տալ նմա,  
 Առաքեաց.  
 Գլխատեաց զՅովհաննէս.  
 Ի բանտի.  
 Բերաւ զլուխ նորա.  
 Սկտեղը.  
 Տուաւ աղջկանն.  
 Տարաւ առ մայր իւր.  
 Մատուցեալ աշակերտքն նո-  
 րա.  
 Բարձին զմարմինն և թաղե-  
 ցին.  
 Եկեալ պատմեցին Յիսուսի.

Թագաւորը արամեցաւ:  
 Երդումներուն համար:  
 Հեաը նստողներուն համար:  
 Հրամայեց որ արուի նորան:  
 (Մարդ) ուղարկեց:  
 Յովհաննէսին զլուխը կտրեց:  
 Բանտին մէջ:  
 Բերուեցաւ նորա զլուխը:  
 Ախտէով:  
 Տրուեցաւ աղջկանը:  
 Տարաւ իւր մօրը:  
 Նորա աշակերտները մօտը  
 դնացին:  
 Վերուցին մարմինն և թաղե-  
 ցին:  
 Եկան պատմեցին Յիսուսին:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ էր Հերովդէս:

Զո՞ կապեաց.

Ո՞ւր եդ դնա.

Վասն ո՞յր.

Ո՞ էր Հերովդէս.

Զինչ ասէր Յովհաննէս ցՀե-  
 րովդէս վասն Հերովդիայ.

Հերովդէս թշնամի էր Յովհան-  
 նու.

Թագաւոր հրէից կամ չորորրո-  
 դապեա:

ԶՅովհաննէս Մկրտիչ:

Ի բանտի:

Վասն Հերովդիայ:

Կին էր Փիլիպպոսի եղբօրն  
 Հերովդի:

Զէ արժան քեզ ունել զդա:

Այո:

Զինչ կամէր առնել ընդ նա.  
Եւ ընդէր ոչ սպանանէր.

Ընդէր երկնչէր Հերովդէս ի  
ժողովրդենէն.

Ե՞րբ կաքաւեաց դուտորն Հե-  
րովղիայ.

Ո՞ւր կաքաւեաց.

Զիսորդ թուեցաւ Հերովղի.

Ո՞րպէս յայտ արար Հերով-  
դէս զհաճութիւն իւր.

Զինչ խնդրեաց դուտորն Հե-  
րովղայ.

Ուտո՞ի բերաւ նա յայն խըն-  
դիւր:

Որպիտի՞ բանիւք արար զխըն-  
դիրն.

Զինչ արար յայնժամ թագա-  
ւորն.

Ո՞չ ետ զգլուխն.

Վասն էր հրամայեաց տալ.

Ո՞ւր զվսատեաց Հերովդէս  
զՅովհաննէս.

Ո՞րպէս բերաւ գլուխն.

Ո՞ւմ տուաւ.

Աղջիկն զինչ արար զգլուխն  
Յովհաննու:

կամէր սպանանել զնա:

Զի երկնչէր ի ժողովրդենէ  
անտի:

Զի ամենեքեան իբրև զմար-  
դարէ ունէին զնա:

Յաւուր ծննդոցն Հերովղի:

Ի մէջ բազմականին:

Հաճոյ թուեցաւ:

Երդամար խոստացաւ տալ նմա  
զինչ և խնդրեսցէ:

Զգլուխն Յովհաննու Մկրտչի:

Յառաջագոյն խրատեալ էր ի  
մօրէ իւրմէ:

Տուր ինձ, ասէ, այսր ի վե-  
րայ սկտեղ զգլուխն Յով-  
հաննու Մկրտչի:

Տրտմեցաւ:

Հրամայեաց տալ նմա:

Վասն երգմանցն և բարձակ-  
ցացն:

Ի բանտի:

Սկտեղը:

Աղջկանն:

Տարաւ առ մայրն իւր:

Ձինչ արարին աչակերտքն  
Յովհաննու.

Ո՞ւմ պատմեցին զայս ամե-  
նայն.

Բարձին զմարմիննորա և թա-  
ղեցին:

Յիսուսի:

## ԵՕԹՆԵԱԿ ԶՈՐԵՔՏՍՍԱՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

1. Նմանեցաւ արքայու-  
թիւն երկնից առն թա-  
գաւորի՝ որ կամեցաւ հա-  
մար առնուլ ի մէջ ծա-  
ռայիցիւրոց: Եւ իբրև սկը-  
սաւ առնուլ, մատուցաւ  
առ նա պարտապան մի  
բիւր քանքարոյ:

2. Իբրև ոչ ունէր հա-  
տուցանել, հրամայեաց զնա  
վաճառել տէրն նորա, և  
զկին նորա և զորդի և զա-  
մենայն որ զինչ և ունի-  
ցի, և հատուցանել:

3. Եւ անկեալ ծառայն  
երկիրպագանէր նմա և ա-  
սէր. երկայնամիտ լեր առ

1. Երկնքի թագաւորու-  
թիւնը նման է այնպիսի  
թագաւորի որ կամեցաւ  
իւր ծառաներուն հետ հա-  
շիւ տեսնել: Երբ որ սկսաւ  
հաշիւներն առնուլ, մէկը  
բերին առաջէն՝ որ տասը  
հազար քանքար պարտախան  
էր:

2. Տեսնելով որ վճարե-  
լու կարող չէ, տէրը հրա-  
մայեց սր ծախսն իրեն, կնի-  
կըն ու զաւակները, և ա-  
մէն ունեցածը, և պարտ-  
քը վճարին:

3. Ծառան ոտքն ընկած  
երկիրպագութիւն կանէր և  
կասէր. փոքր ինչ սպասէ,

իս, և զամենայն հատուցից քեզ: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, և զվոխն եթող նմա:

4. Եւ ելեալ ծառայն այն եզիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր զահեկան. և կալեալ զնա խեղտէր և ասէր Հատո՛ ինձ զոր պարտիսդ:

5. Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա՝ աղաչէր զնա և ասէր. Երկայնամիտ լեր առ իս և հատուցից քեզ, և նա ոչ կամէր. այլ չորաւ արկ զնա ի բանդ՝ մինչև հատուցէ զպարտսն:

6. Իբրև տեսին ծառայակիցքն որ ինչ եզեն՝ տրրամեցան յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեն:

7. Յայնժամ կոչեաց ըզ.

բոլոր պարտքս կրվճարեմ: Խղճաց տէրը ծառային վերայ, թող տուաւ որ ելնէ երթայ, և պարտքը ներեց նորան:

4. Մառան դուրս որ ելաւ, իւր ընկերներէն մէկը գտաւ՝ որ հարիւր դահեկան պարք ունէր, բռնեց նորան և կխեղտէր ու կասէր. Պարտքըդ վճարէ ինձ:

5. Ընկերը ոտքն ընկաւ, կաղաչէր և կասէր. Փոքր ինչ սպասէ, կրվճարեմ պարտքս: Իսկ նա մըտիկ չարաւ, տարաւ նորան բանտ դրաւ մինչև որ պարտքը վճարէ:

6. Մառային ընկերները այս եղաժ բանն որ տեսան՝ շատ ցաւեցան, զնացին ամեն բան տեղովը պատմեցին տիրոջը:

7. Այն ժամանակ տէրը

նա տէրն իւր և ասէ. Մա-  
ռայ չար, զամենայն ըզ-  
պարտսն թողի քեզ, վա-  
սըն զի աղաչեցեր զիս. իսկ  
արդ ո՛չ էր պարտ և քեզ  
ողորմել ծառայակցին քու՛մ,  
որպէս և ես քեզ ողոր-  
մեցայ: Եւ բարկացեալ տէ-  
րը նորա՝ մատնեաց զնա դահ-  
ճաց, մինչև հատուցէ զա-  
մենայն զպարտսն:

կանչեց ծառան իւր մօտ և  
ասաց. Անդգամ ծառայ, ես  
բոլոր պարտքըդ թողի քեզ,  
որովհետև ինձ աղաչեցիր,  
ուրեմն պէտք չէր որ դուն  
ևս քոյ ընկերօջը վերայ  
խղճայիր, ինչպէս որ ես  
քեզ խղճացի: Բարկացաւ  
նորա տէրը և դահճիճնե-  
րու ձեռքը տըվաւ, մինչև  
որ բոլոր պարտքը վճարէ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ.

Համար. հաշիւ:

— Համարեմ. համրել:

— Ի համար արկանել. համրել

— Համարիմ. կարծել:

— Ես այսպէս համարիմ. ես այս-  
պէս կարծեմ

Պարտապան. պարտք ունեցող:

Քիւր. տասը հազար:

— Բիւրք բիւրուց. հարիւր միլիօն  
միլիօնաւոր:

Քանքար. քսակ (փողի):

— Քանքարաճաղոյց. իւր փողը՝  
խելքը կամ շնորհրքը ծածկող:

Ձլանառել. ծախել:

— Վանառ. ապրանք:

— Գին եւ վանառ. առուտուր:

Երկայնամիտ. համբերող, լայն  
սիրտ:

— Երկայնամիտ լինել. համբերել,  
ժամանակ տալ:

— Երկայնամտութիւն. համբերու-  
թիւն:

Գժաւ. խղճալ:

Գժայ յիս. խղճայ իմ վերայ,  
խնայէ ինձ:

Մառայակից. իմիասին ծառայու-  
թիւն անող, ընկեր:

Պարտիմ. պարտական եմ:

Պարտի. պարտական է:  
 — Պարտէ. պէրքէ, հարկէ:  
 Դահեկան. տասնոց, քսաննոց,  
 արծաթ փող:  
 Կալնու. բռնէ:  
 — Չորաւ խեղդեցաւ. զնաց խեղ-  
 դուեցաւ:  
 Յուցանել. ցուցնել, յայտնել, ի-

մացնել:  
 — Յոյց. ցուցուր, ցոյց տուր:  
 — Ի ցոյցս մարդկան. մարդկանց  
 երեւնալու համար:  
 Դահիճ. մահապարտների զուլե  
 կտրող:  
 Դահճապետ. դահիճներու զուլիս:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Նմանեցաւ արքայութիւն երկ-  
 նից:  
 Առն թագաւորի.

Երկնքի թագաւորութիւնը նը-  
 ման եղաւ, կամ նման է:  
 Թագաւոր մարդոյ, այնպիսի  
 թագաւորի:

Որ կամեցաւ համար առնուլ.  
 Ի մէջ ծառայից իւրոց.  
 Իբև սկսաւ առնուլ.  
 Մատուցաւ առ նա.  
 Պարտապան մի բիւր քան-  
 քարոյ.

Որ ուղեց հաշիւ տեսնել:  
 Իւր ծառաներու մէջ:  
 Երբ որ սկսաւ առնուլ:  
 Բերուեցաւ նորա առաջը:  
 Տասը հազար քսակի պարտք  
 ունեցող:

Իբրև ոչ ունէր հատուցանել.

Երբոր վճարելու չափ բան  
 չունէր:

Հրամայեաց տէրն նորա.  
 Զնա վաճառել.  
 Զկին նորա և զորդիս վաճա-  
 ուել.

Նորա տէրը հրամայեց:  
 Ծախել նորան:  
 Նորա կինը և որդիքը ծախել:

Զամենայն զոր ինչ և ունիցի  
 վաճառել.

Ինչ որ ունի ամենը ծախել:

Եւ հատուցանել զպարտան.  
 Անկեալ ծառայն.

Եւ պարտքը վճարել:  
 Ծառան գետինն ընկած:

Երկիրպագանէր նմա և ասէր.

Երկայնամիտ լեր առ իս.

Չամենայն հատուցից քեզ.

Գթացեալ Տէր ծառային այնո-  
րիկ.

Արձակեաց զնա.

Զփոխն եթող նմա.

Ելեալ ծառայն այն.

Եգիտ զմի ի ծառայակցաց  
իւրոց.

Որ պարտէր նմա հարիւր դա-  
հեկան-

Կալեալ զնա խեղդէր.

Եւ ասէր. Հատո ինձ զոր պար-  
տիսդ.

Անկեալ ծառայակցին առ ո-  
տրս նորա.

Աղաչէր զնա և ասէր.

Երկայնամիտ լեր առ իս և  
հատուցից քեզ.

Եւ նա՛ ոչ կամէր.

Զոքաւ արկ զնա ի բանտ.

Մինչև հատուցէ զպարտան.

Իբրև տեսին ծառայակիցքն  
որ ինչ եղևն.

Տրամեցան յոյժ.

Եկեալ ցուցին տեսառն իւրեանց  
զամենայն որ ինչ եղևն.

Երկիրպագութիւն կանէր նո-  
րան և կասէր.

Համբերութեամբ ժամանակ  
տուր ինձ.

Բոլորն կվճարեմ քեզ.

Այն ծառային տէրը խղճաց.

Արձակեց նորան.

Փոխը ներեց նորան.

Այն ծառան ելաւ.

Իւր ծառայ ընկերներէն մին  
զըտաւ.

Որ պարտք ունէր նորան հա-  
րիւր դահեկան.

Բռնեց նորան և կըխեղդէր.

Եւ կասէր. վճարէ ինձ ինչ որ  
պարտք ունիս.

Ծառայ ընկերը նորա ոտքն  
ընկած.

Կաղաչէր նորան և կասէր.

Ժամանակ տուր ինձ ու կը-  
վճարեմ քեզ.

Իսկ նա մտիկ չարաւ.

Գնաց՝ բանտ դրաւ նորան.

Մինչև որ պարտքը վճարէ.

Երբ որ տեսան ծառային ըն-  
կերներն ինչ որ եղաւ.

Շատ ցաւեցան.

Եկան յայտնեցին իրենց տի-  
րոջը ամեն բան ինչ որ եղաւ.

Յայնժամ կոչեաց զնա տէրն  
իւր և ասէ.

Մառայ չար.

Զամենայն զպարտան թողի  
քեզ.

Վասն զի աղաչեցեր զիս.

Իսկ արդ ոչ էր պարտ և քեզ  
ողորմիլ ծառայակցին քում.

Որպէս և ես քեզ ողորմեցայ.

Բարկացեալ տէրն նորա.

Մատնեաց զնա դահճաց.

Մինչև հատուցէ զամենայն  
զպարտան.

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻԻՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Ո՞ւմ նմանեցուցանէ Քրիստոս  
զարքայու թիւն երկնից.

Զինչ կամեցաւ թագաւորն.

Ո՞ մատուցաւ առ նա.

Ո՞րչափ ինչ պարտէր նա թա-  
գաւորին.

Ո՞ւնէր նա այնչափ ինչ ի հա-  
տուցանել.

Զինչ արար տէրն նորա.

Եւ այլ զինչ հրամայեաց վա-  
ճառել զնորա:

Այն ժամանակ կանչեց նորան  
տէրը և ասաց.

Չար ծառայ:

Բոլոր պարտքդ թողի քեզ:

Ինչու որ աղաչեցիր ինձ:

Ուրեմն պէտք չէր որ դու ևս  
խղճայիր ընկերոջդ վերայ:

Ինչպէս որ ես քո վերադ  
խըղճացի.

Նորա տէրը բարկացած:

Դահիճներուն ձեռքը տուաւ  
նորան:

Մինչև որ վճարէ բոլոր պարտ-  
քը:

Առն թագաւորի:

Համար առնուլ ի մէջ ծառա-  
յից իւրոց:

Պարտապան մի բիւզ քանքա-  
րաց:

Բիւր քանքար:

Ոչ ունէր:

Հրամայեաց զնա վաճառել:

Զկին նորա և զորդիս և զա-  
մենայն որ զինչ և ունիցի:

Ծառայն զի՛նչ առնէր:

Զի՛նչ ասէր ծառայն.

Կատարեանց թաղաւորն զհրա-  
ման իւր թէ ոչ.

Եւ ասլա զի՛նչ արար.

Եւ զի՛նչ եղեն պարտքն.

Զո եգիտ ծառայն յեւանել  
իւրում յերեսաց տեառն  
իւրոյ:

Ո՞րչափ ինչ պարտէր նա նմա.

Ո՞րպէս վարեցաւ ընդ նմա.

Ծառայակիցն զի՛նչ առնէր.

Լուան ծառայն աղաչանացն.

Ո՞ւր արկ զնա.

Յ՞որչափ ինչ ժամանակ.

Ո՞ ետես որ ինչ եղեն.

Զի՛նչ ասացին նոքա.

Ո՞ւմ ցուցին զամենայն որ ինչ  
եղեն.

Ո՞րպէս խօսեցաւ տէրն ընդ  
ծառային.

Ընդէր թողեալ էր նմա զա-  
մենայն զպարտան.

Զի՛նչ պարտ էր ծառային առ-  
նել.

Անկեալ երկիրպագանէր տեա-  
ռն իւրում:

Երկայնամիտ ըր առ իս, և  
զամենայն հատուցից քեզ:

Ոչ, քանզի գլխացաւ:

Արձակեաց զնա:

Զպարտան եթող նմա:

Զմի ի ծառայակցաց իւրոց:

Հարիւր զահեկան:

Կալեալ զնա խեղդէր:

Անկեալ առ ոտս նորա աղա-  
չէր զնա:

Ոչ, այլ չոքաւ արկ զնա ի  
բանտ:

Ի բանտ:

Մինչև հատուցէ զպարտան:

Ծառայակիցքն:

Տրտմեցան յոյժ.

Տեառն իւրեանց:

Ծառայ չար անուանեաց զնա:

Վասն զի աղաչեցեր զիս՝ ա-  
սէ:

Ողորմել ծառայակցին իւրում:

ՄԵԼԻ մատնեաց տէրն զծա-  
ռայն չար.

Դահճաց:

## ԵՕԹ՛ՆԵԱԿ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐ՝Ի

ԴԱՍ Ա.

### ԲՆԱԳԻՒՐ

1. Նման է արքայութիւն  
երկնից առն տանուտեառն,  
որ ել ընդ առաւօտս ի  
վարձու ունել մշակս յայ-  
գի իւր: Եւ արկ վարձս մը-  
շակացն աւուրն դահեկան,  
և առաքեաց զնոսա յայ-  
գի իւր:

2. Եւ ելեալ զերրորդ  
ժամու՛ ետես այլս զի կա-  
յին դատարկ ի հրապարա-  
կըս, ասէ և ցնոսա. Եր-  
թայք և դուք յայգի իմ,  
և որ ինչ արժան իցէ՛ տաց  
ձեզ: Գնացին և նորբա:

3. Եւ դարձեալ ելեալ

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Երկնքի թագաւորու-  
թիւնը այն տանտիրոջ կը-  
նմանի որ մի առաւօտ զը-  
նաց՝ իւր այգւոյ համար  
բանւոր բռնելու: Օրը դա-  
հեկանի ծախս արաւ հե-  
տերն և ուղարկեց նորանց  
այգին:

2. Երկրորդ ժամուննու-  
րէն ելաւ, ուրիշ բանւոր-  
ներ ևս տեսաւ, որ հրա-  
պարակներուն մէջ պա-  
րապ կեցել էին: Դուք ևս  
գնացէք այգիս, ասաց, և  
ինչ որ հարկն է կուտամ՝  
ձեզ ևս: Գնացին և նորբա:

3. Նորէն ելաւ վեցերորդ

զվեց ժամու և զինն ժամու,  
արար նոյնպէս: Եւ  
զմետասաներորդ ժամու եւ  
լեալ եգիտ այլս զի կային  
դատարկ, և ասէ ցնոսա.  
Ընդէր կայք աստ զօրս ցե-  
րեկ դատարկ:

4. Ասեն ցնա. Զի ոչ որ  
կալաւ զմեզ ի վարձու: Ասէ  
ցնոսա. Երթայք և դուք  
յայգին, և որ ինչ արժան  
է առնուցուք:

ժամուն և իններորդ ժա-  
մուն և նոյնպէս արաւ: Իսկ  
մետասաներորդ ժամուն որ  
ելաւ, ուրիշ բանւորներ  
գտաւ որ պարապ կեցել  
էին. Ինչո՞ւ համար բոլոր  
օրը այստեղ պարապ կե-  
ցել էք, ասաց:

4. Պատասխան տուին՝  
Թէ ոչ որ մեզ չվարձեց.  
Դուք ևս այգին գնացէք,  
ասաց նոցա, և ինչ վարձ  
որ պէտք է՝ կընդունիք:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Այր տանուտէր. տանուտէր վարդ:  
Եւ ի լեառն. ելաւ ընդ:  
— Եւ ի տանէ բումմէ. ել քո  
տնէդ:  
— Ելեալ. ելած:  
— Ելից. ելնեմ:  
— Ելցուք. ելնեմք:  
Ընդ առաւօտս, առաւօտանց:  
— Առաւօտեմ. առաւօտը վերկե-  
նալ:  
— Առ քեզ առաւօտ առնեմ. ա-

ռաւօտը կանուխ քեզ կուգամ:  
— Ունել ի վարձու. վարձել, բըռ-  
նել.  
— Վարձկան. վարձուոր, փողով  
վարձուած:  
Մշակ. բանւոր, աշխատող:  
— Այգեստան. այգիներ:  
— Յայդեաց. այգիներէ:  
— Վարձս արկանել. վարձ խոս-  
տանալ:  
Ժամէ ի ժամ. ժամէ ժամ:

— Ի ժամուն ժամանակի.  
— Ժամ առնուլ ժամանակ զըտ-  
նել:  
Դատարկ. պարապ, անգործ:

— Դատարկանամ, պարապ կենալ,  
աշխատանքէ դադարիլ:  
Ընդէր. ինչո՞ւ, ինչ պատճառաւ:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Նման է արքայութիւն երկ-  
նից առն տանուտեառն.

Որ ել ընդ առաւօտս.

Ի վարձու ունել մշակս.

Յայգի իւր.

Արկ վարձս մշակացն.

Աւուրն դահեկան.

Առաքեաց զնոսա յայգի իւր.

Ելեալ յերորդ ժամու.

Ետես այլս.

Չի կային դատարկ ի հրապա-  
րակս.

Ասէ և ցնոսա.

Երթայք և դուք յայգի իմ.

Որ ինչ արժան իցէ.

Տաց ձեզ.

Գնացին և նոքա:

Դարձեալ ելեալ.

Երկնքի թագաւորութիւնը նը-  
ման է տանուտէր մարդու:

Որ ելաւ առաւօտը:

Բանւորներ բռնել:

Իւր այգիին համար:

Բանւորներուն վարձ խոստա-  
ցաւ:

Օրը մի դահեկան:

Ուղարկեց նոցա իւր այ-  
գին:

Երրորդ ժամին ելաւ:

Տեսաւ ուրիշները:

Որ պարապ կեցել էին հրա-  
պարակներու մէջ:

Ասաց նոցա ևս:

Գնացէք դուք ևս իմ այգիս:  
Ինչ որ պէտք է, ինչ որ կար-  
ժէ:

Կուտամ ձեզ:

Գնացին և նոքա:

Նորէն ելաւ:

Զվեց ժամու և զինն ժամու:

Արար նոյպէս:

Զմեծասաներորդ ժամու ե-  
լեալ:

Եզիտ այլս զի կային դատարկ:

Ասէ և ցնոսա.

Ընդէր կայք աստ.

Զօրս ցերեկ:

Ասեն ցնա՞

Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վար-  
ձու:

Ասէ ցնոսա.

Երթայք և դուք յայդին.

Որ ինչ արժան է առնուցուք.

Վեցերորդ ժամուն և իններորդ  
ժամուն մօտ:

Նոյնպէս արաւ:

Մեծասաներորդ ժամուն ե-  
լաւ:

Ուրիշ պարապ կեցողներ զը-  
տաւ:

Ասաց նոցա ևս:

Ինչո՞ւ կեցեր էք այստեղ:

Բողոք օրը, առաւօտէ մինչև  
լրիկուն:

Ասին նորան:

Վասն զի ոչ ոք չբռնեց մեզ  
վարձով:

Ասաց նոցա:

Գնացէք դուք ևս այգին:

Ինչ որ պէտք է կառնուք:

### ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ւմ նման է արքայութիւն  
երկնից.

Ո՞ւր ել տանուտէրն.

Վասն էր ել ի հրապարակս.

Ե՞րբ ել տանուտէրն:

Ո՞րքան վարձս արկ մշակա-  
ցըն:

Յ՞ն առաքեաց զնոսա.

Առն տանուտեառն:

Ի հրապարակս:

Ի վարձու ունել մշակս յայ-  
գի իւր:

Ընդ առաւօտս:

Աւուրն դահեկան:

Յայգի իւր:

Յորոճմ ժամու ել դարձեալ.

Ձինչ ետես:

Ո՞ւր կային մշակքն դատարկք.

Ձինչ ասաց ցնոսա տանուտէ-  
րըն.

Ո՞յր էր այգին.

Ձինչ խոստացաւ տալ նոցա.

Մշակքն զինչ արարին.

Քանիցս անգամ ել տանուտէ-  
րըն ի վարձու ունել մշա-  
կըս:

Եզիտ զոք և մետասաներորդ  
ժամու:

Ձինչ ասաց ցնոսա.

Ձինչ սլատճառեցին մշակքն.

Ջերրորդ ժամու:

Ետես այլս զի կային դա-  
տարկ:

Ի հրապարակս:

Երթայք և դուք այգի իմ:

Տանուտեառնն:

Որ ինչ արժանն իցէ:

Գնացին և նոքա յայգին:

Հնգիցս, այսինքն ընդ առա-  
ւօտս, զերրորդ ժամու, զվեց  
ժամու, զինն ժամու, և ըզ-  
մեռասաներորդ ժամու:

Այո, եզիտ այլս զի կային  
դատարկ:

Ընդէր կայք աստ զօրս ցե-  
րեկ դատարկք:

Ձի ոչ ոք կալաւ, ասեն, զմեզ  
ի վարձու:

## ԵՕԹՆԵԱԿ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ

1. Եւ իբրև երեկոյ ե-  
զև, ասէ տէր այգւոյն ցը-  
գաւառապետ իւր: Կոչեա

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Երեկոյ որ եղաւ, այգ-  
ւոյն տէրն ասաց գաւա-  
ռապետին՝ թէ Բանւորները

զմշակսն և տուր նոցա վարձս սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն:

2. Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահեկան. եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նորա:

3. Իբրև առին, տրտընջէին զտանուտեառնէն և ասէին, թէ Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հասարակորդս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտոթ:

4. Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ, Ընկեր, չգրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միջ սակ արկեր ընդ իս. առ զքոյդ և երթ:

կանչէ և իրենց վարձերը վճարէ՝ յետիններէն մինչև առաջինները:

2. Մետասաներորդ ժամուն բռնուածներն որ եկան՝ մի միդահեկան առին: Առաջիններն երբ որ եկան, մտքերնին դրած էին թէ աւելի բան պիտի առնուն. նորա ևս առին մի միդահեկան:

3. Սկսան տանտիրոջ դէմ զանգատիլ և ասել թէ՛ Այդ յետինները մի ժամ միայն բանեցան, և դոքա ևս մեզ հաւասար արիր որ բոլոր օրուան ծանրութիւնն և տաքը քաշեցինք:

4. Իսկ նա պատասխան տուաւ նոցանէ մէկուն և ասաց. Եղբայր, ես քեզ զրկանք չե աներ. դուն մի դահեկանի ծախս չարիր ինձ հետ. առ քո վարձը և գնա:

5. Եթէ կամիմ յետնոցս տալ՝ որպէս և քեզ, եթէ չից՞ ինձ իշխանութիւն յիմաս առնել զինչ և կամիմ, կամ թէ ակնքո չար է, զի ես առատս եմ:

6. Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք:

5. Ես եթէ քեզ տըւածիս պէս կուզեմ սալ այս յետիններուն, մի՞ թէ իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վերայ ուղածըս անելու. կամ թէ պիտի ասեմ որ քո արածդ նախանձ է որ ես այսպէս առատաձեռն եմ:

6. Ահա այս կերպով յետիններ կան որ առաջին պիտի լինին, առաջիններ ևս կան որ յետ պիտի մընան. վասն զի կանչուածները շատ են, իսկ ընտրուածները սակաւ:

### ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Ընդ երեկս. իրիկուան դէմ:

— Ընդ երեկոյս. իրիկունները:

Յերեկոյէ. իրիկուանէ:

— Երեկոյացաւ. իրիկուն եղաւ:

Գաւառապետ. հազարապետ, տընտես, մատակարար:

Յետին. յետի, վերջին, ետքի:

— Յետ այնորիկ. այնուհետեւ:

— Եղիցին առաջինքն յետինք.

առաջինները յետին լինին:

Մէն մի. մի մի, մէկ մէկ:

Տրտնջել. զանդատել, տժգոհալ:

— Տրտունջ. զանպատ, տժգոհուծիւն:

Հասարակորդ. հաւասար բաժին առնող:

Բառնալ. քաշել, վերցնել:

— Բարցի. վերուցի:

— Բարց. վերցնու:

— Բառնալ թողուլ. երեսի վրայ  
ձգել:

Տօթ. սաստիկ տաքութիւն, տաք  
օդ:

Չքիկել. զրկանք անել, վնաս հաս-  
ցունել:

Սակարկանել. ծախսի նստիլ:

ծախս անել:

Ակն ղնել. աչք ձգել:

— Ընդ ակամբ հայել. ծուռ աչ-  
քով նայել:

— Առ ականէ. աշտութիւն, խա-  
թեր համար:

Կոչեմ. կանչել, հրախրել, անուն  
ղնել:

— Կոչեմ. աղաղակել, բռնալ:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Իբրև երեկոյ եղև.

Ասէ տէր այգւոյն ցգաւառա-  
պետ իւր.

Կոչեա զմշակսն.

Տուր նոցա վարձս,

Սկսեալ ի յետնոցն.

Մինչև ցառաջինսն.

Իբրև եկին որք զմետասանե-  
րորդ ժամուն.

Առին մէն մի դահեկան.

Եկեալ և առաջինքն.

Համարէին թէ աւելի առնու-  
ցուն:

Առին մէն մի դահեկան և նո-  
քա:

Իբրև առին:

Տրանջէին զտանուտեառնէն  
և ասէին:

Երբ որ իրիկուն եղաւ:

Ասաց այգւոյն տէրը իւր դա-  
ւառապետին:

Կանչէ բանւորները:

Տուր նոցա վարձ:

Սկսելով յետիններէն:

Մինչև առաջինները:

Երբ եկան նոքա որ մետասա-  
ներորդ ժամուն վարձուեր էին:

Առին մի մի դահեկան:

Եկան առաջիններն ևս:

Կարծէին թէ աւելի պիտի առ-  
նուն:

Մի մի դահեկան առին նոքա  
ևս:

Երբ որ առին:

Կզանդատէին տանտիրոջ դէմ  
և կասէին:

Գորա յետինքդ մի ժամ գոր-  
ծեցին:

Հասարակորդս մեզ արարեր  
զգտա.

Որ զճանրութիւն աւուրն բար-  
ձար և զտօթ-

Նա պատասխանի ետ միում  
ի նոցանէ և ասէ:

Ընկեր, չղբկեմ զքեզ.

Ո՞չ դահեկանի միտջ սակ ար-  
կեր ընդ իս.

Ա՛ռ զքոյդ և երթ.

Եթէ կամիմ յեանոցս տալ  
որպէս և քեզ.

Եթէ չիցէ ինձ իշխանութիւն  
յիմսս առնել զինչ և կա-  
միմ:

Կամ թէ ակն քո չար է.

Զի ես առատս եմ.

Այսպէս եղիցին յետինք ա-  
ռաջինք և առաջինք յե-  
տինք.

Զի բազումք են կոչեցեալք.

Սակաք են ընտրեալք:

Այդ ետինները մի ժամ բա-  
նեցան:

Մեզ հաւատար արիւր դոցա:

Որ օրուան ծանրութիւնն և  
տաքը քաշեցինք:

Նա պատասխան տուաւ նո-  
ցանէ մինին և ասաց:

Եղբայր, քեզ զրկանք չեմ ա-  
ներ:

Մի դահեկանի ձախս չարիւր  
ինձ հետ:

Ա՛ռ փողդ և գնա:

Եթէ ուզեմ այս յետիններուն  
տալ ինչպէս քեզ:

Միթէ իշխանութիւն չունիմ  
իմ բաներուս վերայ ինչ որ  
ուզեմ անելու:

Կամ թէ քո աչքդ չար է:

Որ ես այսպէս առատաձեռն  
եմ:

Այսպէս պիտի լինին յետին-  
ները առաջին, և առաջին-  
ները յետին:

Վասն զի շատերը կանչուած  
են:

Քիչերը ընտրուած են:

ԳԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ե՞րբ ասաց տէր այգւոյն կո-  
չել զմշական:

Յ՞՛ս ասաց կոչել զմշական.

Ընդէ՛ր կոչեաց զմշական.

Որպիսի կարգաւ ասաց տալ  
նոցա վարձս.

Ո՞չք եկին նախ առնուլ ըզ-  
վարձս.

Ո՞րչափ ինչ առին նոքա.

Առաջինքն յինչ միտս էին.

Եւ ո՞րչափ ինչ առին նոքա.

Զինչ ասացին առաջինքն յոր-  
ժամ առին զվարձս իւր-  
եանց.

Վասն էր տրտնջէին.

Ո՞րչափ ինչ ժամանակ զոր-  
ծեալ էին յետինքն:

Առաջնոցն վաստակք իւ ա-  
ռաւել էին.

Տանուտէրն ուժ կտ սպասա-  
խանի.

Զինչ կոչեաց զնա.

Զո՞ր հարցումն արար առ նա.

Եւ զինչ հրամայեաց նմա:

Իբրև երեկոյ եղև:

Յգաւառապետ իւր:

Տալ նոցա վարձս:

Սկսեալ յետնոցն մինչև ցա-  
ռաջինսն:

Որք զմետասաներորդ ժամուն:

Մէն մի զահեկան:

Համարէին թէ աւելի առնու-  
ցուն:

Եւ նոքա ևս առին մէն մի  
զահեկան:

Տրտնջէին զտանուտեառնէն:

Զի հասարակորդսնոցա արար  
զյետինսն:

Մի ժամ:

Այնու զի զճանրութիւն ա-  
ռուրն բարձին և զտօթ:

Միում ի նոցանէ:

Ընկեր:

Ո՞չ զահեկանի միոջ սակ ար-  
կէր ընդ իս:

Առնուլ զիւրն և երթալ:

Յետնորցն որպէս կամեցաւ  
տալ.

Ո՞ր իշխանութիւն է տանու-  
տեառն.

Որպիսի ասաց տանուտէրն  
դակն տրանջող մշակին.

Ընդէր չարակնէր մշակն.

Ո՞չք իցեն բազումք.

Եւ ո՞չք սակաւք.

Որպէս և առաջնոցն.

Առնել յիւրսն զինչ և կամի-  
ցի:

Չար:

Ձի տանուտէրն առատ էր:

Կոչեցեալքն:

Ընտրեալքն:

## ԵՕԹՆԵԱԿ ԵՕԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

### ԲՆԱԳԻՐ

1. Յիսուս մտեալ շրջէր  
ընդ Երիբով. և ահա այր  
մի, անուն կոչեցեալ Զակքէ-  
ոս, և նա էր մաքսապետ,  
և ինքն մեծատուն, խնդ-  
րէր տեսանել թէ ո՞վ իցէ  
Յիսուս, և ոչ կարէր ի բազ-  
մութենէն, զի կարճ էր  
հասակաւ:

2. Եւ ընթացեալ յառաջս,  
եւ ի ժանտաթղենին

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Յիսուս Երիբով (քաղաքը)  
մտաւ և կշրջէր և ահա  
ահա Զակքէոս անունով  
մարդ մի, որ մաքսապետ  
էր, ինքն ևս հարուստ  
մարդ, կջանար տեսնել թէ  
արդեօք ո՞վ է Յիսուս, բայց  
ժողովրդեան բազմութենէն  
չէր կարող, վասն զի հասակը  
կարճ էր:

2. Առաջ վաղեց, ժա-  
տաթղենին վերայ ելաւ, որ

զի տեսանիցէ զնա. քանզի  
ընդ այն խոկ անցանելոց էր:

3. Երբև եկին ի տեղին՝  
հայեցաւ ի վեր Յիսուս և  
ասէ ցնա. Զակբէ. փութա՛մ  
էջ-այտի, զի այսօր ի տան  
քու՛մ արժան է ինձ ագա-  
նել:

4. Փութացաւ և էջ և  
ընկալաւ զնա ուրախու-  
թեամբ: Երբև տեսին ա-  
մենեքին, տրանջէին և ա-  
սէին թէ Առ առն մեղաւո-  
րի եմո՛ւս լուծանել:

5. Եկն եկաց Զակբէոս  
և ասէ ցՏէր. Տէր, ահա  
զկէս ընչից իմոց տաց աղ-  
քատաց, և եթէ զոք զրկե-  
ցի՛ հատուցից չորեքկին:

6. Եւ ասէ ցնա Յիսուս.  
Այսօր եղև փրկութիւն  
տանս այսմիկ. քանզի և սա  
որդի Աբրահամու է. զի ե-  
կըն Որդի մարդոյ խնդրել

տեսնէ, որովհետև անցնե-  
լու տեղն նորա մօտէն էր:

3. Այն տեղն որ եկաւ,  
Յիսուս վեր նայեցաւ ու  
ասաց նորան Զակբէոս, շուս.  
Եջիր այդ տեղից, վասն զի  
պէտք է որ ես այսօր քո  
դունդ իջլանիմ:

4. Շտապեց իջաւ և ու-  
րախութեամբ ընդունեց նո-  
րան: Տեսնողներն ամէնքն  
ևս սկսան զանգատիլ և  
ասել որ մեղաւոր մարդու  
տունն իջաւ:

5. Զակբէոս եկաւ կան-  
գընեցաւ (Յիսուսի առջևն)  
և ասաց. Տէր, ահա ունե-  
ցածիս կէսն կուտամ աղ-  
քասներուն, և եթէ մէկուն  
զրկանք արել եմ, քառա-  
պատիկը վճարեմ:

6. Յիսուս պատասխան  
տուաւ թէ՛ Այս տունն այս-  
օր փրկութեան հասաւ.  
վասն զի սա ևս Աբրահա-  
մու որդի է. և Մարդոյ

Լ կեցուցանել զկորուսեալսն:

Որչին (Քրիստոս) և կաճ է որ կորսուածներն զանէ ու ապրեցրնէ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Շրջիմ. ժուռ դալ, ման գալ, քալել:

Մարսապետ. մարսատան մեծը:

Մարս. կէօմբիւք:

— Մարսաւոր. մարս առնող:

Ջո խնդրես. որին կփնտրես:

Հասակ. մեծութիւն, տարիք, պոյ:

— Հասակակից. տարեկից:

— Կարճահասակ. հասակը կարճ:

— Բնթանալ. վազել:

— Բնթացք. վազուածք:

— Բնթացարան. վազելու տեղ:

— Բնթացակից. խմիասին վազող:

Ժանտամոզենի. վայրի թուղի ծառ:

Հայել. նայիլ:

— Հայեցուած. նայուածք:

— Հայեաց ի բեզ. բո վերադնայէ:

— Հայելի. հայլիլ:

— Ի հայելուջ. հայլի մէջ:

Փռածամ. շտապիլ:

— Փոյթ. ջանք, հոգ:

— Չէ ինձ փոյթ. հոգս չէ:

— Փոյթ ընդ փոյթ. շուտով, շուտ շուտ:

— Փռածանակի. շուտ շուտ:

— Փռածապէս. շտապելով:

Ագանել. իջնել, տեղի մի դադարիլ, հանդիլ:

Ղուճանել. քակել, արձկել, իջնել, իջեւանիլ:

Ինչք. ստացուածք, հարստութիւն:

Չորեքկին. չորս անգամ աւելի:

— Չորեքին. չորսն եւս:

— Չորեքօրեայ. չորս օրուան:

— Չորիցս. չորս անգամ:

— Չորեքտասան. տասներչորս:

Կեցուցանել. կեանք տալ, ապրեցրնել:

— Կեցո. կեանք տուր, փրկէ, ապրեցուր:

— Կեցցես. ապրիս, շատ ապրիս:

Կորուսանեմ. կորսնել:

— Կորնչիմ. կորսուիլ.

— Կորեաւ. կորսուեցաւ:

— Կորո՞. կորսնցուր:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Յիսուս մտեալ շրջէր ընդ Ե-  
րիքով.

Եւ ահա այր մի:

Անուն կոչեցեալ Չակքէոս.

Նա էր մաքսապետ.

Ինքն էր մեծատուն.

Խնդրէր տեսանել թէ ո՞վ իցէ

Յիսուս:

Ոչ կարէր ի բազմութենէն.

Ձի կարճ էր հասակաւ.

Ընթացեալ յառաջս.

Եւ ի ժանտաթղենին.

Ձի տեսանիցէ զնա.

Քանզի ընդ այն իսկ անցա-  
նելոց էր.

Իբրև եկն ի տեղին.

Հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ  
ցնա:

Չակքէ, փութա էջ այտի.

Ձի այսօր ի տուն քում ար-  
ժան է ինձ ազանել.

Փութացաւ և էջ.

Ընկալաւ զնա ուրախու-  
թեամբ.

Իբրև տեսին ամենեքին.

Տրանջէին և ասէին.

Յիսուս ման կուգար Երիքո-  
վի մէջ:

Եւ ահա մարդ մի.

Չակքէոս անունով.

Նա մաքսապետ էր.

Ինքը հարուստ էր:

Կուզէր տեսնել թէ ո՞վ է Յի-  
սուս.

Չէր կարող ժողովրդեան շա-  
տութենէն:

Վասն զի հասակը կարճ էր:

Յառաջ վազեց:

Ժանտաթղենին վերայ ելաւ:

Որ տեսնէ նորան:

Վասն զի այն տեղէն պիտի  
անցնէր:

Երբ ևկաւ այն տեղն:

Վեր նայեցաւ Յիսուս և ասաց  
նորան:

Չակքէ՛ոս. շուտ արա, իջիր  
այդ տեղէն:

Վասն զի այսօր պէտք է որ  
քո տունդ իջևանիմ:

Շտապեց և իջաւ:

Ընդունեց նորան ուրախու-  
թեամբ:

Երբոր ամէնքն ևս տեսան:

Կզանգատէին և կասէին:

Առ առն մեղաւորի կմուտ  
լուծանել:

Եկն եկաց Չակքէոս և ասէ  
ցՏէր:

Տէր, ահա ղկէս ընչից խնոց  
տաց աղքատաց.

Եւ եթէ զոք զրկեցի՝ հատու-  
ցից չորեքկին.

Եւ ասէ ցնա Յիսուս.

Այսօր եղև փրկութիւն տանս  
այսմիկ.

Քանզի և սա որդի Արբահա-  
մու է.

Չի եկն Որդի մարդոց խնդրել  
և կեցուցանել զլորուսեա-  
լըն:

Մեղաւոր մարդու տուն մտաւ  
իջևանելու:

Եկաւ կանգնեցաւ Չակքէոսն  
և ասաց Յիսուսին:

Տէր, ահա ստացուածքիս կէսը  
կուտամ աղքատներուն:

Եւ եթէ մէկուն զրկանք արի,  
քառասպատիկը կը վճարեմ:

Ասաց նորան Յիսուս:

Այս տանը այսօր փրկութեան  
հասաւ:

Ղ. ամն զի սա ևս Աբրահամու  
որդին է:

Ղ. ամն զի Որդին մարդոց (Քը-  
րխատոս) եկաւ որ կորսուա-  
ծը փնտռէ զանէ ու ապ-  
րեցընէ:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ր մտեալ չրջէր Յիսուս:

Չինչ էր Երեքով.

Չինչ արուեստ էր Չակքէի.

Աղքատ ոք էր թէ մեծատուն

Չինչ խնդրէր.

Ընդէր ոչ կարէր տեսանել:

Յերիքով.

Քաղաք էր ի Հրէաստան:

Մաքսապետ էր նա:

Մեծատուն էր:

Խնդրէր տեսանել թն ո՛վ իցէ  
Յիսուս:

Չի բազմութիւն յոյժ էր ժո-  
ղովրդեանն և ինքն կարճ  
էր հասակաւ:

Ձինչ արար Չակքէս՝ զի տե-  
սանիցէ զՅիսուս:

Ընդէր ել ի ժանտաթղենին:

Ձինչ արար Յիսուս:

Եւ զինչ ասաց զՉակքէս:

Ո՞ր կամեցաւ Յիսուս աղա-  
նել յայնմ աւուր:

Ձինչ արար Չակքէս:

Ձիարդ ընկալաւ Չակքէս  
զՅիսուս:

Ո՞րպէս խօսեցաւ Չակքէս  
ընդ Յիսուսի:

Ձինչ ասաց զՅիսուս:

Ընդէր զկէս ընչիցն միայն  
կամէր տալ:

Իսկ զըրկանսն սրպէս հատոյց:

Ձիարդ ասաց զայն:

Ձոր փոխարէնանըկալաւ Չակ-  
քէս ի դարձին իւրում:

Ո՞ր որդի ասաց Քրիստոս  
զՉակքէս:

Է՞ր վասն եկն Որդին մարդոյ,  
այսինքն Յիսուս:

Ընթացաւ յառաջս և ել ի  
ժանտաթղենին:

Քանզի ընդ այն իսկ անցա-  
նելոց էր Յիսուս:

Իբրև եկն ի տեղին, հայեցաւ  
ի վեր:

Չակքէ, փութա էջ այտի:

Ի տանն Չակքէի:

Փութացաւ և էջ և ընկալաւ  
զնա:

Ուրախութեամբ:

Եկն եկաց առաջի նորա և  
ասէ:

Տէր, ահա զկէս ընչից խնոց  
տաց աղքատաց:

Ձի ոչ ի զըրկանաց ստացեալ  
էր զինչսն:

Չորեքդին:

Եթէ զոր զըրկեցի՝ հատուցից  
չորեքդինն:

Չայն՝ զի փրկութիւն եղև տան  
նորա յաւուր յայնմիկ:

Աբրահամու:

Խնդրել և կեցուցանել զկո-  
րուսեալն:

# ԵՕԹՆԵԱԿ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

## ԲՆԱԳԻՐ

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Մի՛ երկնչեր, հօտ փոքրիկ. դի հաճեցաւ հայր ձեր, տալ ձեզ զարքայութիւն:

1. Մի՛ վախենար, փոքրիկ հօտ վասն զի ձեր հայրը կամեցաւ որ թագաւորութիւն տայ ձեզ:

2. Վաճառեցէք զինչս ձեր և տուք ողորմութիւն, և արարէք ձեզ քսակս առանց հանաւոր, զանձ անպակաս յերկինս՝ ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ. զի ուր զանձք ձեր է, անդ և սիրաք ձեր եղիցին.

2. Մախեցէք ձեր ստացուածքն և ողորմութիւն տուէք. չհնանալու քսակների պատրաստեցէք, չպակասելու զանձ ժողովեցէք երկինքը, ուր ոչ գող կը մօտենայ և ոչ ցեց կուտէ կապականէ: Ձեր զանձը ո՛ւր որ է, ձեր սիրտն ևս այնտեղ կլինի:

3. Եղեցին դօտիք ձեր պիղեալ ընդ մէջս, և ճրարագունք լուցեալք, և դուք նմանողք մարդկան, որ ակն ունիցին տեառն իւրեանց, թէ երբ դառնայցէ ի հար-

3. Ձեր դօտիները մէջքերդ ձիդ կապուած լինին, ձեր ճրագներն ևս վառ լինին. դուք այն մարդկանց նմանեցէք, որ կըսպասեն թէ արդեօք իւրեանց տէ-

սանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցին նմա:

4. Երանի՛ իցէ ծառայիացըն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասևմ՝ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ:

5. Բայց զայն զիտասջիբ. եթէ զիտէր տանուտէրն յորում՝ ժամու գող գայ, հսկեր և չտայր թոյլ ական հատանել ի տանիւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ:

րը երբ պիտի դառնայ գայ հարսանիքէն, այնպէս որ եկած ժամանակ դուռը զարկածին պէս բանան:

4 Երանի՛ այն ծառաներուն՝ եթէ տէրը գայ և արթուն գտնէ նոցա. իբաւ կասեմ՝ ձեզ, մէջքը գօտի կրկապէ, կընստեցնէ նոցա և ինքը՝ կիւնէ նոցա ծառայութիւն անելու: Եւ եթէ երկրորդ կամ երրորդ պահուն գայ և այնպէս գտնէ, երանելի են այն ծառաները:

5. Բայց այս ևս զիտացէք, որ եթէ տանուտէրը զիտնար թէ գողը ո՞ր ժամուն կուգայ, արթուն կրկենար և չէր թողուր որ իւր տանը պատը ծակեն: Դուք ևս պատրաստ եղէք. վասն զի ո՞ր ժամու որ չէք կարծեր, այն ժամանակ կուգայ Որդին մարդոյ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Մի երկնչիք. մի վախենար:  
— Ես յու՛մն՛ էրկեայց. ես ուս-  
տի պէտքէ վախենամ:  
— Երկիւղած. վախկոտ:  
— Արդար եւ երկիւղած. արդար  
եւ Աստուածավախ:  
— Երկչոտ. վախկոտ:  
Հօտ. ոչխարներու բազմութիւն:  
— Հօտապետ. մեծ հովիւ:  
Հանձիմ. յօժարիլ, կամենալ:  
— Հանոյ. սրտին ուղածը:  
— Քսակ. քէսէ, տօպրոս:  
Հնանալ. հինանալ:  
— Հնախօսութիւն. հին պատմու-  
թիւն:  
— Հնօտիք. հին բաներ.  
Գանձել. դանձ. ժողովել եւ պա-  
հել:  
— Գանձարան. գանձ պահելու  
տեղ:  
— Գանձապետ. գանձի պահա-  
պան.  
Անպակաս. որ չիպակասիր:  
Մերձենալ. մօտենալ:  
Յեցակեր. ցեց կերած:  
Գօտի ընդ մէջ ածեալ. մէջքը դօ-  
տի կապած:

— Ընդ մէջ. մէջ տեղէն:  
Ճրագունք. ճրագներ:  
— Ճրագալոյժ. ճրագ վառելը:  
— Ճրագարան. մոմակալ, աշտա-  
նակ:  
Լուցանել, վառել:  
— Լուցի. վառեցի:  
— Լոյց. վառէ:  
— Լուցկի. վառելու բան, աբեթ:  
Բախել. զարկել:  
— Բաբախել, ստեպ զառնել, դող-  
ղզալ:  
— Վաղվաղակի. շուտով, իսկոյն:  
— Վաղվաղել. շտապիլ:  
Բացցիւն. բացուին:  
— Բացցի մեզ դուռն ողորմու-  
թեան, բացուի մեզի ողորմու-  
թեան դուռը:  
Բազմեցուցանել. նստեցնել:  
— Ա՛յց բազմեաց. վեր անցիր  
բազմէ, նստիր:  
— Բազմոց. նստարան:  
Պաշտել. ծառայել:  
— Պաշտօն. ծառայութիւն:  
Պաշտօն առնուլ. ծառայութիւն  
ընդունել:  
— Պաշտօնեայ. ծառայ, սպասա-

ւոր:

—Պահ. երեք ժամու միջոց:

—Երկրորդ պահ. կէս զիշերէն  
երեք ժամ յետոյ:

Հսկել. արթուն կենալ:

—Հսկումն. զիշերը բուն չլինելը:

Թոյլ տալ. թողուլ:

Ական. պատի ծակ:

—Ականահատ. պատ ծակող:

Գ.Ա.Ս Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ Թ.ԱՐԳ.ՄԱՆՈՒԹԵԱՆ.

Մի երկնչիր, հօտ փաքրիկ.

Հայր ձեր հաճեցաւ.

Հաճեցաւ տալ ձեզ.

Տալ ձեզ զարքայութիւն.

Վաճառեցէք զինչս ձեր:

Տուք ողորմութիւն.

Արարէք ձեզ քսակս առանց  
հնանալոյ:

Գանձ անպակաս.

Յերկինս.

Ուր գող ոչ մերձենայ.

Ուր ցեց ոչ ապականէ.

Ուր գանձ ձեր է.

Անդ և սիրտք ձեր եղիցին.

Եղեցին գօտիք ձեր սնդեալ  
ընդ մէջս.

Եղեցին ճրագունք ձեր լու-  
ցեալք.

Նմանողք եղերուք մարդկան.

Մի վախնար, փոքրիկ հօտ.

Ձեր հայրը յօժարացաւ:

Յօժարացաւ տալ ձեզ:

Թաղաւորութիւն տալ ձեզ:

Ծախեցէք ձեր ստացուած-  
քը:

Ողորմութիւն տուէք:

Այնպիսի քսակներ չլինեցէք  
ձեզ, որ չեն հինանար:

Չպակասելու գանձ:

Երկինքը:

Ուր որ գող չմօտենար:

Ուր որ ցեցը չփճացներ:

Ձեր գանձը ուր որ է:

Ձեր սրտերն ևս այն տեղը  
կլինին:

Ձեր դօտիները մէջքերդ կա-  
պուած լինին:

Ձեր ճրագները վառ լինին:

Նման եղէք այնպիսի մարդ-  
կանց:

Որ ակն ունիցին տեսուն իւրեանց:

Թէ երբ դառնայցէ ի հարսանեաց.

Յորժամ դայցէ և բախիցէ.

Վաղլազակի բանայցեն նմա.

Երանի իցէ ծառայիցն այնուցիկ:

Չորս եկեալ տէրն դացէ արթունս.

Ամէն ասեմ ձեզ:

Գօտի ընդ մէջ ածցէ.

Բազմեցուցէ զնոսա.

Անցեալ պաշտիցէ զնոսա.

Եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեացէ:

Եթէ դացէ այնպէս.

Երանելի են ծառայքն այնուքիկ.

Չայն զխտասլիք.

Եթէ զիտէր տանուտէրն.

Յորում պահու դող դայ.

Հսկէր տանուտէրն.

Չտայր թոյլ ակսն հատանել.

Ի տան իւրում.

Եւ դուք եղերուք պատրաստք:

Յորում ժամու ոչ կարծիցէք.

Որ կտարտեն իւրեանց տիրուջը:

Թէ երբ պիտի դառնայ հարսանիքէն:

Երբ որ դայ ու դուռը զարկէ: Իսկոյն դուռը բանան նորան:

Երանի կլինի այն ծառաներուն:

Որոց Տէրն որ դայ՝ արթուն գանէ:

Իրաւ կասեմ ձեզ:

Մէջքը դօտի կկապէ:

Վընատեցընէ նոցա:

Ոտք կեւնէ կծառայէ նոցա:

Եթէ երկրորդ կամ երրորդ պահուն դայ:

Եթէ այնպէս գանէ:

Այն ծառաներն երանելի են:

Այն բանը լաւ զխտացէք:

Եթէ տանուտէրն զխտենար:

Որ ժամանակ կուգայ դողը:

Տանուտէրը արթուն կկենար:

Չէր թողուր որ պատը ծակէ:

Իւր տանը մէջ:

Գուք ևս պատրաստ եղէք:

Չեր կարծիք չարած ժամանակին:

Գայ Որդի մարդոյ.

Կուղայ Սրդին մարդոյ:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ՁՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Որպիսի անուանեաց Տէր ըզ-

հօտ իւր:

Ձինչ էր զոր փոքրիկն անուա-  
նեաց:

Ձինչ ասէ ցհօտն փոքրիկ.

Ո՞ հաճեցաւ տալ մեզ զար-  
քայութիւն:

Ձինչ հաճեցաւ տալ մեզ.

Ձինչ պարտիմք վաճառել:

Եւ զինչ առնել գնովքն.

Որպիսի քսակս պարտիմք առ-  
նել:

Ո՞ւր պարտի լինել գանձն  
մեր:

Որպիսի գանձ.

Ձիանդդ անպակաս մնայ գան-  
ձըն յերկինս:

Յեցն զինչ առնէ գանձուն.

Ո՞ւր են սիրտք մեր.

Գօտիք մեր որ պիտիք պար-  
տին լինել.

Ճրագունք մեր որպէս.

Ո՞ւմ պարտիմք լինել նմա-  
նողք.

Ուստի դառնայցէ տէրն.

Փոքրիկ:

Չհօտ իւր:

Մի՛ երկնչիր:

Հայր մեր:

Չարքայութիւն:

Չինչս մեր:

Տալ ողորմութիւն:

Քսակս առանց հնանալոյ:

Յերկինս:

Անպակաս:

Ձի ոչ գող մերձենայ անդր,  
և ոչ ցեց ապականէ:

Ապականէ զայն:

Ուր գանձն մեր է:

Պնդեալ ընդ մէջս:

Լուցեալք:

Մարդկան որ ակն ունիցին  
տեսուն իւրեանց:

Ի հարսանեաց:

Ե՞րբ բացցեն նմա.

Ո՞րպէս բացցեն.

Ո՞ւմ իցէ երանի.

Որո՞ց ծառայից.

Զինչ արասցէ տէրն.

Զիւրդ վարեսցի ընդ նոսա:

Զո՞ պաշտեսցէ.

Ե՞րբ կարէ զալ տէրն.

Ո՞ք իցեն երանելիք.

Յորո՞ւմ ժամու գող գայ.

Եթէ զիտէր զինչ առնէր.

Եւ միք որպիսիք պարտիմք  
լինել.

Ե՞ր վասն.

Ե՞րբ գայ Տէրն.

Յորժամ գայցէ և բախիցէ:

Վաղվաղակի:

Ծառայիցն այնոցի:

Զորս եկեալ տէրն գացէ ար-  
թունս:

Գօտի ընդ մէջ ածցէ:

Բազմեցուցէ զնոսա:

Զծառայսն իւր:

Յերկրորդ կամ յերորդ պա-  
հու:

Ծառայքն այնորիկ:

Ոչ զիտէ տանուտէրն:

Հսկէր, և ոչ տայր թոյլ ակաւե  
հատանել ի տան իւրում:

Պատրաստք:

Զի յորում ժամու ոչ կարծի-  
ցեմք, գայ Տէրն մեր:

Յորում ժամու ոչ կարծիցեմք:

## ԵՕԹՆԵԱԿ ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

ԲՆԱԳԻՐ.

1. Սրբ երկու ելին ի  
տաճարն՝ կալ յաղօթս. մին  
փարիսեցի, և միւսն մաք-  
սաւոր:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Երկու հողի տաճա-  
րը զնացին աղօթք անելու.  
մին փարիսեցի և միւսը մաք-  
սաւոր:

2. Փարիսեցին կայր մեկուսի, և դայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, զոհանամ ըզքէն՝ զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, զյափշտակողրս և զանիրաւս և զշունրս, կամ իբրև դայս մաքսաւոր:

3. Այլ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց:

4. Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծրս իւր և ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս:

5. Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա: Զի ամենայն, որ

2. Փարիսեցին մէկ կողմը կեցած էր, և առանձինն այսպէս աղօթք կանէր. Աստուած իմ, փառք կուտամ քեզ, որ ուրիշ մարդկանց նման չեմ, ոչ յափշտակողներուն պէս եմ, ոչ անիրաւներուն, ոչ շնացողներուն, և ոչ թէ այս մաքսաւորին պէս:

3. Այլ շաբաթը երկու անգամ պահք (ծոմ) կպահեմ, և ամէն ստացուածքէս տասանորդներ կուտամ:

4. Մաքսաւորն ևս մէկ կողմ կեցած էր, բայց չէր ուզիր և ոչ աչքը դէպ ի երկինք վերցընել. ձեռքը կուրծքին կգարկէր ու կասէր. Աստուած, թողու թիւն տուր ինձ մեղաւորիս:

5. Կասեմ ձեզ, որ սա աւելի արդարացած զարձաւ իւր տունը քան թէ

բարձրացուցանէ զանձն իւր  
խոնարհեսցի. և որ խոնարհ  
հեցուցանէ զանձն՝ բարձ-  
րացցի:

նա: Ասան զի ով որ ինքն  
իրեն բարձր բռնէ՝ պէտք  
է խոնարհի, և ով որ ինքն  
իրեն խոնարհ բռնէ՝ պէտք  
է բարձրանայ:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ

Յաղօթս կալ. աղօթք անել:  
Փարիսեցի. սուտ բարեպաշտ,  
կեղծաւոր:  
Մէկուսի. մէկ կողմ:  
Աղօթս մատուցանել. աղօթք ա-  
նել:  
Գոհութիւն. շնորհակալութիւն:  
Իբրեւ զանիրաւս. անիրաւներու  
պէս:  
Պահել. պահք պահել, ծոււժ բըռ-  
նել:  
Երկիցս. երկու անգամ:  
— Երկուցս. երեք անգամ:  
— Բիւրիցս. տասը հազար ան-

գամ, խիստ շատ անգամ:  
Տասանորդել. տասներորդ մասը  
տալ:  
Ստացուած. ունեցածը, կայք:  
Բնդ երկինս. դէպ ի երկինք:  
Կոծել. ձեծել, զարկել:  
— Կոծ. ողբ ևւ լաց:  
Քաւել. յանցանքը ներել, մեղքը  
թողուլ:  
Բարձրացուցանել. բարձրացնել,  
բարձր բռնել:  
Խոնարհեցուցանել. ցածցնել, ցած  
բռնել:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ.

Արք երկու:  
Ելին ի տաճարն.  
Կալ յաղօթս.

Երկու մարդ, երկու հոգի:  
Ելան, գնացին տաճարը:  
Աղօթքի կենալ, աղօթք տա-  
նել:

Մին փարիսեցի:

Եւ միւսն մաքսաւոր:

Փարիսեցին կայր մէկուսի.

Եւ զայս առանձին աղօթս մատուցանէր:

Աստուած իմ, գոհանամ զքէն.

Չի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ,

Ի՛չրև զյափշտակող.

Իբրև զանիրաւս.

Ի՛չրև զչունս.

Կամ իբրև զայս մաքսաւոր:

Այլ պահեմ:

Երկիցս ի շարաթու.

Տամ տասանորդս.

Յամենայն ստացուածոց իմոց.

Եւ մաքսաւորն կայր մեկուսի.

Ոչ կամէր.

Եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ.

Այլ կոծէր զկուրծս իւր.

Եւ ասէր. Աստուած. քաւեա զիս զմեղաւորս,  
Ասեմ ձեզ.

Մէկը փարիսեցի:

Եւ միւսը մաքսաւոր:

Փարիսեցին կեցած էր մէկ կողմ:

Եւ այս կերպով առանձին աղօթք կանէր:

Աստուած իմ, գոհ եմ չնորհակալ եմ քեզնէ:

Որ ուրիշ մարդկանց պէս չեմ:

Յափշտակութիւն անողներուն պէս:

Անիրաւներուն պէս.

Շնացողներուն պէս:

Կամ այս մաքսաւորին պէս:

Հասպա պահք կպահեմ, ծոմ կկենամ:

Շաբաթը երկու անգամ:

Տասանորդներ կուտամ:

Իմ բոլոր ունեցածներէս:

Մաքսաւորն ևս կեցած էր մէկ կողմ:

Չէր կամենար, չէր ուզեր:

Եւ ոչ աչքը դէպ ի երկինք վերցնել:

Այլ կուրծքը կծեծէր, ձեռքը կուրծքին կղարկէր:

Ու կասէր. Աստուած, քաւութիւն տուր ինձ մեղաւորիս:  
Կասեմ ձեզ:

Էջ սա ի տուն իւր.  
Արդարացեալ քան զնա.

Ձի ամենայն որ բաճրացու-  
ցանէ զանձն իւր.

Խոնարհեսցի.

Եւ որ խոնարհեցուցանէ զան-  
ձըն:

Բարձրացի.

Գնաց սա իւր տունը:

Քան զնա աւելի արդարա-  
ցած:

Վասն զի ո՛վ որ ինքն իրեն  
բարձրացընէ:

Պիտի խոնհարի, կխոնարհի:

Եւ ո՛վ որ ինքն իրեն խոնար-  
հեցընէ:

Պիտի բարձրանայ, կբարձրա-  
նայ:

ԴԱՍ Դ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ՋՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ

Ո՞ր ել ի տաճարն.

Առ ի՞նչ ելին ի տաճարն.

Ո՞ք ոմանք էին որ ելին.

Ո՞ւր կայր փարիսեցին.

Ո՞րպէս մատուցանէր զաղօթ-  
սըն:

Ձիանդ կոչէր զԱստուած.

Չուամէ զոհանայր.

Է՞ր աղազաւ.

Իբրև զորս.

Մաքսաւորն զի՞նչ առնէր.

Ձիանդ ունէր զաչս իւր.

Արք երկու ելին:

Կալ յաղօթս:

Մին փարիսեցի և միւսն մաք-  
սաւոր:

Մեկուսի կայր:

Առանձինն:

Աստուած իմ, ասէր:

ՉԱստուծոյ:

Ձի ոչ ևմ ասէր իբրև զասյլս  
ի մարդկանէ:

Չյափշտակողս և զանիրաւ  
և զշունս, և իբրև զայն մաք  
սաւոր:

Նա ևս կայր մէկուսի:

Ոչ կամէր և զաչսն ընդ եր-  
կինս ամբառնալ:

Չինչ նշան խոնարհութեան  
ցուցանէր.

Չինչ հայցէր յԱստուծոյ:

Չխնդրէր կոչէր զանձն իւր.

Ո՛ւր իջին նորա ի տաճարէ  
անտի.

Եւ որպէս.

Ընդէր:

Կոծէր զկուրծս իւր:

Քաւել զնա:

Մեղաւոր կոչէր:

Ի տունս իւրեանց:

Մարտաւորն արդարացեալ  
քան զփարիսեցին:

Չի ամենայն որ բարձրացու-  
ցանէ զանձն իւր՝ խոնար-  
հեսցի, և որ խոնարհեցուցա-  
նէ զանձն՝ բարձրացի:

## ԵՕՐՆԵԱԿ ՔԱՆԵՐՈՐԻ

ԴԱՍ Ա.

### ԲՆԱԳԻՒՐ

1. Յանժամ նմանեսցի  
արքայութիւն երկնից տա-  
սըն կուսանաց, որոց ա-  
ռեալ զլապտերս իւրեանց՝  
ելին ընդ առաջ փեսայի  
և հարսին:

2. Հինգն ի նոցանէ յի-  
մարք էին, և հինգն իմաս-  
տունք Յիմարբնա ուին ըզ-

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Ա յն ժամանակը երկ-  
նից թագաւորութիւնը նը-  
ման պիտի լինի տասը կոյ-  
սերու, որ իւրեանց լապտեր-  
ներն առած՝ փեսային ու  
հարսին առաջէն ելան:

2. Ի նոցանէ հինգը յի-  
մար էին, և հինգն իմաս-  
տուն: Յիմարներն առին

լապտերան, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց:

3. Ի յամէլ փեսային՝ նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին: Եւ ի մէջ դիշերի եղև բարբառ. Ահա փեսայ զայ, աբնք ընդ առաջ նորա: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց:

4. Ասին յիմարքն ցիմաստունան. Տէ՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական. այլ երթա՛րք ի վաճառականս և դնեսձիք ձեզ:

5. Իբրև նորա գնացին

լապտերներն և ձէթ չտարին իւրեանց հետ. իսկ իմաստուններն ամաններով ձէթ առին լապտերներուն հետ:

3. Երբ որ փեսան ուշացաւ՝ ամենուն քունը կոխեց և քնացան: Կէս զիշերուն ձայն լսուեցաւ թէ Ահա փեսան կուգայ, առջևն ելէք: Այն ժամանակ ելան բոլոր կուսանքն ու իւրեանց լապտերներն պատրաստեցին:

4. Յիմարներն ասին իմաստուններուն. Զեր իւղէն տուէք մեզ, զի սն զի ահա մեր լապտերները անցնելու վերայ են: Իմաստուններն պատասխան տուին և ասին. Կարելի է որ բաւական չլինի մեզի ու ձեզի. ուստի գնացէք վաճառականներուն ու գնեցէք ձեզի համար:

5 Երբ որ նորա գնացին

զնել, եկն փեսայն, և պատ-  
րաստքն մտին ընդ նմա ի  
հարսանիսն, և փակեցաւ  
դուռնն:

6 Յետոյ գան և այլ  
կուսանքն և ասեն. Տէր  
Տէր, բաց մեզ: Նա պա-  
տասխանի ետ և ասէ. Ա-  
մէն ասեմ ձեզ թէ ոչ զի-  
տեմ զձեզ: Արթուն կա-  
ցէք, զի ոչ զիտէք զօրն  
և ոչ զժամն:

զնելու, փեսան եկաւ, և  
նորա որ պատրաստ էին,  
մտան նորա հետ հարսա-  
նիքը, և դուռը փակուե-  
ցաւ:

6. Յետոյ կուգան միւս  
կուսանքն ու կ'ասեն. Տէր  
Տէր, բաց մեզ: Նա պա-  
տասխան տուաւ և ասաց.  
Խրաւ կ'ասեմ ձեզ որ չեմ  
ճանաչեր ձեզ: Արթուն  
կացէք, որովհետեւ ոչ օրը  
զիտէք և ոչ ժամը:

ԴԱՍ Բ. ԲԱՌԱՐԱՆ.

Կուսան. կոյս աղջիկ:  
Լապտեր. ֆէնէռ:  
Բառնալ. վերցնել, առնուլ:  
— Ոչ բարցի. չվերուցի, չ'վերառի:  
Յամել. ուշանալ:  
— Յամր. ծանր, ուշ ուշ, ուշա-  
ցող:  
Նիրնել. բռնը կոխել, մրափել:  
Ի բուն մտանիլ. բնաննլ:  
Մէջ զիշերոյ. կէս զիշերին:  
Բարբառ. ծայն, աղաղակ:  
— Բարբառիմ. ծայն հանել, խօ-

սիլ:  
Արի. ել, վեր կաց:  
Կաղմել. շիտկել, պատրաստել:  
Տուր. տուէր:  
— Տուր. եւ տացի ձեզ. տուէր որ  
տրուի ձեզի:  
Շիշանիմ. մարիլ, անցնիլ:  
— Շիշուցանեմ. մարիլ, անցնել  
(համզցնել):  
— Շիշո. մարէ, անցուր:  
Չեմ բաւական. արժանի չեմ:  
Գնոց զնեցայք. թանկ զնուեցաք:

Փակեցան որունք.

որոնքը փակուեցան:

ԴԱՍ Գ. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Յայնժամ նմանեսցի:

Արքայութիւն երկնից.

Տասն կուսանաց.

Որոց առեալ զլապտերս իւրեանց.

Սկին ընդ առաջ փեսայի և հարսին:

Հինգն ի նոցանէ.

Յիմարք էին.

Հինգն իմաստունք էին:

Յիմարքն առին զլապտերսն.

Ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին.

Իմաստունքն առին ձէթ ամանովք.

Ընդ լապտերս իւրեանց.

Ի յամել փեսային.

Նիրհեցին ամենեքեան և ի բուն մտին.

Ի մէջ գիշերի.

Եղև բարբառ.

Ահա փեսայ գայ:

Արիք ընդ առաջ նորա.

Այն ժամոնակը կնամանի, նման կլինի:

Երկնքի թագաւորութիւնը:

Տաս կոյս աղջիկներու:

Որ իրենց լապտերներն առած:

Փեսային ու հարսին առջևն ելան:

Անոցմէ հինգը:

Յիմար էին, անխելք էին:

Հինգն իմաստուն՝ խելացի էին:

Յիմարներն առին լապտեր: ները:

Ձէթ չտարին իրենց հետ:

Իմաստուններն առին ձէթ ամաններով:

Իրենց լապտերներուն հետ:

Փեսան որ ուշացաւ:

Մրափեցին ամէնքն ու քունն եղան:

Կէս գիշերուն:

Ձայն ելաւ, ձայն լսուեցաւ:

Ահա փեսան կուգայ:

Նորա առջևն ելէք:

Յայնժամ յարեան ամենայն  
կուսանքն:

Կաղմեցին զլապտերս իւրեանց

Ասեն յիմարքն ցիմաստունսն:

Տուք մեզ յիւղոյդ ձերմէ:

Չի ահա չիջանին լապտերքս  
մեր:

Պատասխանի ետուն իմաս-  
տունքն և ասեն:

Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բա-  
ւական:

Երթայք ի վաճառականսն:

Գնեսջիք ձեզ:

Իրբն նորա գնացի գնել:

Եկն փեսայն:

Պատրաստքն մտին ընդ նմա  
ի հարսանիսն:

Փակեցաւ դուռնն:

Յետոյ գան և այլ կուսանքն:

Եւ ասեն, Տէր Տէր, բաց մեզ:

Նա պատասխանի ևս և ասէ:

Ամէն ատեմ ձեզ:

Ոչ գիտեմ զձեզ:

Արթուն կացէք:

Այն ատեն ելան ամէն կոյ-  
սերը:

Պատրաստեցին իրենց լապ-  
տերները:

Ասին յիմարներն իմաստուն-  
ներուն:

Տուէք մեզ ձեր իւղէն:

Վասն զի ահա մեր լապտեր-  
ները անցնելու վերայ են:

Պատասխան տուին իմաս-  
տուններն ու ասին:

Կարելի է թէ բաւական չլի-  
նի մեզ ու ձեզ:

Գնացէք վաճառականներուն:

Գնեցէք ձեզ համար:

Երբ որ նորա գնացին զընե-  
լու:

Եկաւ փեսան:

Պատրաստ եղողները մտան  
նորա հետ հարսանիքը:

Փակուեցաւ դուռը:

Յետոյ կուգան միւս կուսան-  
քըն ևս:

Ու կասեն, Տէր Տէր, բաց  
մեզ:

Նա պատասխան տուաւ ու  
ասաց:

Ճշմարիտ կասեմ ձեզ:

Չեմ ճանաչեր ձեզ:

Արթուն կացէք:

Ձի ոչ գիտէք զօրն և ոչ ըզ-  
ժամն.

Վասն զի ոչ օրը գիտէք և  
ոչ ժամը:

ԴԱՍ Ք. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԶՐՈՒՅԱՏՐՈՒԹԵԱՆ.

Ո՞ւմ նմանեցոյց Տէր զարքա-  
յութիւն երկնից,

Ձի նչ արարին կուսանքն.

Ձի նչ առին ընդ իւրեանս.

Ձի նչ խտիր էր ի նոսա.

Ձի նչ արարին յիմարքն.

Եւ զի նչ իմաստունքն.

Ի՞նչ առին զձէթն.

Ձի նչ արար փեսայն.

Եւ զի նչ յայնժամ կուսանքն.

Ն՞րբ եկն փեսայն.

Ո՞րպէս ծանուցաւ այն.

Կուսանքն զի նչ արարին.

Ձի նչ խնդրեցին յիմարքն յի-  
մաստնոցն.

Ընդէր.

Իմաստունքն ետնն նոցա  
զձէթ.

Ձի նչ խորհուրդ ետուն նոցա  
իմաստունքն.

Տասն կուսանաց:

Ելին ընդ առաջ փեսայի և  
հարսին:

Ղլապտերս իւրեանց:

Հինգն ի նոցանէ յիմարք էին,  
և հինգն իմաստունք:

Ձէթ ոչ բարձին ընդ իւրեա-  
նրս:

Առին ձէթ ընդ իւրեանս:

Ամանովք:

Յամեաց:

Նիրհեցին և ի քուն մտին:

Ի մէջ գիշերի:

Բարբառ եղև:

Յարեան և կազմեցին զլապ-  
տերս իւրեանց,

Տալ նոցա յիւղոյն իւրեանց:

Ձի չիջանէին լապտերք իւ-  
րեանց:

Ոչ գուցէ, ասեն, ոչ իցէ մեզ  
և ձեզ բաւական:

Երթալ ի վաճառականս և զը-  
նել զիւղ:

Իբրև նորա գնացին զի եղև:  
Ո՞ք ոմանք մտին ընդ նմա ի  
հարսանիս:

Ո՞ք էին պատրաստքն.

Ե՞րբ եկին այլ կուսանքն.

Զինչ ասացին:

Զինչ ետ նոցա փեսայն 'պա-  
տասխանի.

Զինչ պատուիրեաց Տէր յետ  
պատմելոյն զառական զայն.

Ընդէր.

Զ՞ր օր և զ՞ր ժամ ոչ զի-  
տեմք:

Եկն փեսայն:

Պատրաստքն:

Իմաստուն կուսանքն:

Յետոյ:

Տէր Տէր, ասեն, ըաց մեզ:


Ասէ, Ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ  
զիտեմ զձեզ:

Արթուն կացէք, ասէ:

Զի ոչ զիտեմք զօրն և ոչ ըզ-  
ժամն:

Զօր և զժամ զալստեանն Քրիս-  
տոսի և զկատարածի աշ-  
խարհիս:

ՎԵՐՋ ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ.



872



(In. 504.)

1971年4月16日

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0059244

A <sup>7</sup> 16973